

ՄԻՒԹԱՐԱՅ ԳՈՇԻ



ԽՐԱՏՔ ՈՎԵՇԱՀՔ



ՎԵՆԵՏԻԿ

Ե ՏՊԱՐԱՆԻ ՄԻՒԹԱՐԵԱՆՑ

ԹՑԶԴ - 1933

Ս Ո Փ Ե Ր Ք

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Ք

ի զ .

ՄԽԻԹԱՐԱՅ ԳՈՅԻ

ԽՐԱՏՔ ՈԳԵՇԱՀՔ



Վենետիկ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՅ-ԱՐԵԱՆՑ

0329 - 1933

6 . 07 . 2013

44296
1936-98
15-79

19 NOV 2011



ՅՈՒՇԻԿ

ՏՐՏՄԱԹԱԽԻԾ

Հ. ՊԱՒՂՈՍԻ ՔԻԼԻԶԵԱՆ

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԽԱՆՁԻՆ

Ի ԾԱՂԿԱՏԻ ՀԱՍԱԿԻՆ

ԽԱՄՐԱՑԵԼՈՑ



Ա. ԶԵԴ

Ի զեղեցկուրենի ձգեալ երկեցունց
առսիցս և ի սրբասիր ոգույն որով
զրեալի եմ՝ շարժեալ, ի րոյս ըն-
ծայելու զդոսա ի ձաշակ ման-
կանց Հայաստանեայցս եկեղեցոյ
և յուղղուրիւն վարոց իշրաբան-
չիւր՝ լսա հոգեկեցոց իշրատոց
որ ի սոսին:

Գտանին ի հետագիր բղրեայ զրբ-
ւագրին մերում՝ պրելոյ առ ա-
սացնորդուրեամբ ինսրնդի կարո-
ղիկոսի, յելս ԺԲ դարութե՝ որով

3457-88

և ժամանեակակից իսկ զո՞ւ հեղինակին, այն է՝ Միհրաբայ Գոշի:

Պահի բնագիրն ի կարգի մատենադարանին՝ թի, և, 352 բոշով, յէջն 628-659, յեռեալը ի վերջ կոյս Վեցօրէից Ա. Բարսի կեսարու, և. մեկնուքեանց Ա. Եփրեմի Ասորացին:

Զմատեն ագրական տեղեկութիւնն, զվարդապետութիւնն, զուղղութիւնն բառից և. ուղյ զոր հարկաւոր համարեցաք կարգել, որպէս և. զայլ կարեւորագոյնն, զոցեն խնդրողը ի մերունն Բագմավէպ Հանդիսի Նոյ-Գեկտ. 1933 ամին:

Զօնեմ զայս ի յոշ եղքոր հոգեկցի ի տիս երիտասարդուքեան յաստեաց յափշտակելոյն, ոյր անձատութեան տարածամբ՝ ապաք էն կակիծ դառնարոյր երող սրտից և բնաց սիրելեաց:

Ընթերցցին զայս. և. զոր չկարցն վարել բանից բարողն եռանդուն, թերեւս օգտեալ ի ամանեատուածակը անձանց, և. ընդուրա՝ կացք յաւերժ բաղդրախօսիկ վարդապետ սովորակու այս դուզնաքեայ:

Հ. Գ. Ա.

Վ. Ա. Ս. Ն.

ՃՇՄԱՐԻՏ ԵՒ ՀԱՃՈՅ

ՍՊԱՍԱՔՈՐԵԼ

ՄԱՐՄՆՈՅ ԵՒ ԱՐԵԱՆՆ ՏԵԱՐՆ

Ե՞ս քանզի անթուելիք մարդա-
սիրութեանդ են հոյլք, ըստ որում
միայն հիացեալ սոսկմամբն այնիւ
օրհնութիւնս նուիրեն եռահիւսակս
մաքուրքն տեսլեամբք և անմար-
մինք, և անդիտանալով տեղւոյ, որ-
պէս և են՝ երբեմն անսահմանաբար
բաւանդակելով՝ զերգս ներբողեն:
Զի ոչ ինչ սքանչելի հասեալն և
յապալեալ, յամը և անշարժ, օրի-
նակ իմն միաք՝ փափագման: Եւ զի
սիրես գրեթէ միշտ առ քեզ լինել
կալմամբ, որոյ աղագաւ՝ զգալեացս
հաղորդս արարեր տեսլեամբ, և կը-
ցորդել վայելմամբ, զի իցես գիտելի՝
և անհաս, բան՝ և պաշտելի, և մոօք

անչափելի; Ուստի և մեզ սակաւ թողարկուցանես համեմատել զանցեալն ընդ ներկայի հրաշխցն, և որ կայ այժմ՝ ընդ ապառնոյն ամանակի, և զգերակայն գնել ամեն ի բարին, որ ի վեր քան զյոյս և զակնկալութիւնն է. ոչ մեզ միայն, այլ որչափ ի ներքոյ կայ քո բնութիւն; Եւ այնքան վեհ պարգեւն՝ որչափ և մեծ տուողդ՝ ի խոնարհ քան զարդարեւդ բաշխող; Ոչ ուսմեք հասեալ արժանապէս՝ բայց եթէ առատ քո կամօք:

Եւ զի նախաշաւիդ հանուրքն են եղեալք ի սկզբանցն այսմիկ զարմանազան իրի, իշխան ընդ հզօրիդ ձեռամբ կացուցեր զկազմեալն պատկեր ամենայնի, ուսուցանելով հնազանդեօքն զնուածիլ. և այն օրինակաւ՝ գոնեա անբանիցն նմանիլ սպասու: Եւ զի անլուծանելի ստունկանողի մնացէ զարիմ՝ երկրորդ զհաւանողն ցուցեր հայր քում բանի, հաճելով ընդ կամս ինքնա-

մատոյց պատարագին, զեկուցանելով զբանին պաշտօն. նմանապէս ընախիր և փորձ մատուցողին և նախամատոյց օրինակին: Եւ զի հաւատոցն սեփհականեացի արմատառ քեզ զինդրողն ի զգալեացս կոչեցեր, յուսոյն բերելով զնա առպատուեալն փոփոխմամբ. նախագիտակ զանունդ արարեր զմեծ, գնելով փրկչին խրայելի, և կոչմամբ Աբրահամու, և Աահակայ, և Յակոբայ, զառաջադրեալն պատուեցեր յօծումն աղօթանուեր և համբակ քահանայ: Զծերն տարտամ և յամբ թողարկուցեր՝ իբր նախատիպ գրոյն, և զգուշալի ըզդործ ցուցեր սպասուն, զմանկունսըն և զհնացեալն դատելով: Զկնի զմարմնոյ ետուր պէտս՝ մաքրեալ իւղով ընդ զօրավարին աջով: Ոչ դատարկ և ունայն շնորհն, այլ լի և պատարուն ձիրն, վանիչ և խոհեցող, դատող արդար և զզջացող. յատուկ յանցնիւրոն պարագրեալ՝

զուգաչափ ընդունողացն։ Զօրեղս
ահաւոր, և ընդունակ աղերսողս,
աւետիւք և խորհրդով զօրացեալս։

Եւ ընդ ո՞ր արդեւք ունայն մեր
անցցէ բան։ Ընդ ելեալսն յԵղիւպւ-
տոսէ, թէ զերծեալսն ի Բարելոնէ։
զինաման յանապատին, եթէ զզօ-
րութիւնսն յԱսորեստանայն։ Զէեր-
ձանել վիմին, թէ զբարժանել ծո-
վուն։ Զողջախո՞չն ի պակշոտ ապրե-
ցուցանել ծերոցն օրիորդ, եթէ ի
գրոյ զարկեալն առիւծուց մարդա-
րէ։ Զպարտո՞ւմն Ամաղեկայ վերա-
ցեալ ձեռամբ նշանակիչ խորհրդոյ,
եթէ գարձուցանելն զՅորդանան
ծածկեալ օրինակաւ։ Զշնորհալի՞
զերես առնել մանդանցն պարզա-
բար կերակրովք, եթէ անկէզ զնո-
սին ի հնոցին առնել օրհներդուս
լծակցելով չորրորդին։ Զորս առ
Երիքով, եթէ ընդ անցս առ Քանան։
Զկործանո՞ւմն ձայնիւ, եթէ զդադա-
րո՞ւմն բանիւ պատուարացն անմա-
տոյց և լուսաւորացն մեծամեծաց։

Զ Գեղէ ո՞նին, եթէ զԲարակայն։
ԶԱմփսոնին, եթէ զՅեփթայն։ Եւ
զանց ընդ Պաւլոսի առնելով առա-
քելոյն, զՊաւթին, եթէ զԱմուէ-
լին։ Զտեսողացն, եթէ զդասողացն։
Զարանց արեանցն, եթէ զկանանց
խոչականաց։ զԶօրաբաբելին, եթէ
զԱռողմոնին։ Որ ինչ առ Եղիսա-
և Եղիսէոս, եթէ առ Եղեկիէլ և
Երեմիաս։ Ընդ բանան, եթէ ընդ
սքանչելիսն։ Ընդ խորհուրդն, եթէ
ընդ տեսիլսն։ Եւ զի ոչ ինչ հա-
մաչափ մերոյ վեհիս են բարոյ,
զառակին առնել օրինակի՝ Ճշմարիտ
զգեցմամբ փոփոխեալ զիմն առնլով
փոխան տուեցելոյն, ըստ որում ի
կուսէ Հոգւով։ Եւ ոչ սոսկ այս
այլ և զմերն կրեալ, բայց ի մեղաց։
Յառաջ մինչ ի մահուն եկիր ի
փորձ։ Զմելս գատապարտեցեր
մարմնով, և զմահ հատեր կենօք։
Ընդ մեզ ըրջեցար մարդ, և յերկի-
նըս համբարձար Աստուած։ ԶՄար-
մինդ ետուր պարդեւս, և զԱրիւնդ

փրկանս: ԶՀոգւյդ հեղեր շնորհս,
և զսէր ցուցեր Հօր: Զեկեղեցի հաս-
տատեցեր առաքելոք, և զորդիս
նորա ամրացուցեր մարդարէիւք:
Քահանայս կացուցեր զգաստս, և
պաշտօնեայս հպատակս: Զմեկս աշ-
խարհի քաւեցեր նոքօք, և բառնաս
օրինակաւն զոր ետուր:

Ամենազանս կոչեցեր անուամբ,
և խորհրդոյ խմատիւք: Ի քաւելն՝
քահանայս. ի տալն՝ բաշխող. յա-
ռաջինն՝ երեց. ի դատելն՝ տէր. ի
յուղելն՝ առաջնորդ. վերստին առ-
նելն ծնունդ՝ լուսաւորիչ. զուգել
յամունութիւն՝ յարմարիչ. տալ
հողյ՝ զհողն օրհնիչ և բազմամաս-
նեայ. յուսուցանելն՝ վարդապետ.
ի լուծանելն՝ որոշիչ. ի միաւորելն՝
օրհնող. ի տեսանելն՝ դիտող. յամ-
րութիւնն՝ սիւն. ի պարփակելն՝
պարինապ. ի գթալն, հայր՝ և ի
ծնանելն. ի կսկծեցուցանելն՝ աղ.
յիմաստութիւնն՝ լոյս. ի խրատելն՝
դաստիարակ. յանձանձելն՝ դայ-

եակ. և ի գործս իւր խորհրդոյ՝ ա-
մենայն: Եւ որ ըստ բնաւն անցանէ՝
Մարմոյ քո և Արեան սպասաւոր
և Ճաշակող, ընդ քեզ միաւորիչ և
բնակաւոր: Կելոյ պատճառ կեն-
դանեաց, և միշտ քաւող մեռելոց:

Անհամեմատ բարձրութեամբ, և
ցանկալի անմարմոնց: Հանսապազօր
զհուրդ կրէ, Աստուած, և յամե-
նայն ժամու ընդ քեզ կայ պաշտե-
լով: Աստուած յԱստուծոյդ. զի՞նչ
եւս ասել: Զմեկս թողուլ՝ Աստու-
ծոյ. ոչ սանձել խրատու եւեթ, այլ
և զեղեալն բառնալ, ըստ որում և
Գառնդ բարձեր անարատ: Զհնա-
ցեալն վերստին ձուլէ նորոդ՝ որպէս
զպատկերն գու առմամբ: Զայսս հա-
լածէ աղօթիւք՝ իբր զհզօրդ բանիւ: Զցաւս
դադարեցուցանէ մարմոյ,
և զվէրս բժշկէ հոգւյ, իբր զքա-
ւեչտ պոռնկին և զբժշկդ հիւան-
դաց: Յերկրի կապէ, և յերկինս
արձակէ: Յերկինս փակէ, և յերկրի
ընդարձակէ. նմանեալ հիմողիդ

Երկրի և արարողիդ զԵրկինս խոր-
հըրդովէ:

Հակառակ ընդգիմադրէ չարին,
և զօրանայ շնորհիւ՝ հաստատեալ ի
բանն զոր ետուր քաջալերելով ի
յաղթելն քում աշխարհի: Զհոդին
առնէ երկինս ի բնակելն քեզ փա-
ռօք, և զմարմինն երկիր՝ երեւմամբ
քո ի նմա: յԱստուածդ կայ ի միա-
ւորելն քում ի նմա, և զանձառդ
մատակարարէ պարգեւս օր ըստ
օրէ: Զձեւս մաքրէ ջրով՝ նշանակ
սրտին սրբութեան, և զՄարմինդ
կազմէ հաց, և զԱրիւնդ նուիրէ
բաժակ՝ անմարմնոյդ և անարեան:
Եկեղեցւոյ սպասէ նուաստ, և զան-
ձըն օրինակաւ քեզ առնէ տաճար:
Զտօնս հռչակէ աշխարհի, և ընդ
հրեշտակս վերապարէ: ԶՄարմինդ
ճաշակէ յերրորդ ժամու, և զՀոդ-
ոյդ սրբոյ առնու վիջումն: Զսուր-
բըդ կոչէ սրբոց ձայնիւ՝ դալ, և
զծածկեալդ յայտնէ վերացմամբ:
Զբազուկս սփուէ տարածմամբ, և

զաջն ընդ երկինս կարկառմամբ:
Քանակ ոգւոց զօրութեան, և չափ
մարմնոյ զգայարանի: Ի վեր քեզ
զսիրոն ընծայէ, և մատամբ զՀայն
բեկանէ՝ բաշխելով զհեղեալն բարի:
Զերկինս դողացուցանէ աշեղ՝ առ-
մամբ իանին, և զերկրայինսն բերէ
ընդ անմահիդ: Զանմարմինսն հիա-
ցուցանէ համարձակելովն, և զհրե-
ղէնսն սոսկացուցանէ ճաշակիմամբն:
Զսուրբոն խրախ առնէ յիշմամբ,
միանգամայն և կոչմամբ միջնորդ.
և զհամօրէն ննջեցեալսն քաւէ ա-
զերսիւ:

Զհայր հաշտեցուցանէ Որդւովդ,
և զնիւթն սրբէ Հոգւովն: Յերկինս
գոչէ և յերկրի լսելի լինի, և զան-
ձակիւլիդ առնու հուր: Զգոհացո-
ղականն նուիրէ ձայն, և ընդ ինք-
եան զԲանդ բերէ բարձեալ: Ան-
մեկնելի ընդ քեզ կայ տենչմամբ,
և միշտ զնոյն գործէ Խորհուրդ:

Այսմ և զիս արարեր ամենայնի
կցորդ իրի, անձինս դատախաղ բը-

նաւն քո բարի; Զի զի՞նչ մահացելոյս՝ կեանքդ. աղքատիս՝ ճռխտ. հիւանդիս միշա՝ բժիշկդ. նսեմացելոյս՝ լոյսդ. ի բարձանց հոսելոյս՝ վէմդ. փախուցելոյս՝ պատապարանդ. հեռացելոյս՝ մերձաւորդ. ախտացելոյս՝ մաքուրդ. գարշելոյս՝ գեղեցիկ. դատապարտելոյս՝ փրկիչդ. սիրողիս զչար՝ բարիդ:

Զի՞նչ զոր դու ոչ արարեր նման քում սիրոյ, և զո՞ր ես ոչ արարի չար: Ի հողոյ՝ մարդ. յանբանից՝ բանաւոր. յօտարացն՝ ծանօթ. յանհաւատից՝ հաւատացեալ: Ընդ հեթանոսի՝ Հրեայ օրինաւոր. ընդ իսրայեղի՝ քրիստոնեայ շնորհաւոր: Ի միացելոց՝ օծեր քահանայ. յերիցանց՝ ածեր յուսածունս իմաստից: Իսկ ես, մարդ անզարդ, անբան և անմիտ: Յոտար և ոչ ծանօթ. անհաւատ բանի և խորհրդոյ: Հեթանոս վարուք՝ և Հրեայ անարդող: Փրիստոնեայ անուսամբ և ոչ գործով: Կուսան ձեւով և խառնակ

մտօք: Քահանայ կոչմամբ՝ և դաշտապարտ դասիւ: Ի վարժու պղերդ՝ և ի բանս դանդաղ: Եւ որ ծայր ամենայն մեր է բանիցս և գլուխ բարեաց, Մարմնոյ քո մատակարար և Արեան սպասաւոր. զանմաքուրս և զանարժանս: Զյղացեալս անօրէնութեամբ և զծնեալս մեղօք. զբծաւոր սնեալս և զզարդացեալ արատաւորս. անսուրբ օծեալ քահանայս և պիղծ նուիրողս. միշտ սիսալողս և ողորմութեամբ պատարագողս: Եւ զի զարհուրելի է ինձ ձայնդ ահաւոր՝ Սուրբք եղերուք զի ես սուրբ եմ. և զի՝ Սրբութիւնք սրբոց վայելէ:

Աւազ ինձ հազարաց, յանդը նութեամբ մերձեցելոյս: Զի թէ յուղղելն զտապանակն յորում բընակեալգ էիր, Սուրբ, հաջոյ սիսալոյն՝ սաստ, զի՞նչ ես կրիցեմ, թիւրիչ քան յարմարիչ: Եւ թէ անդիտաբար մատուցողացն զհուրն օտար, կիզումն նովաւ, զի՞նչ ինձ

գիտողիս աննման և ընտանի բերող
հրցին։ Եւ թէ պաշտօնեայք օրինա-
կին հեղդացեալք՝ սրով անկան այլ-
ազգեաց, զիա՞րդ ի սրոյ քո զեր-
ծայց, ճշմարտիդ և կատարելագու-
նիդ։ Եւ եթէ նախնին իմ հայր՝
ընդ միոյ պատուիրանին զոր եառւր
լուծման, ի ծառոյն վրիպեցաւ կե-
նաց, ո՞րպէս ես արժանի եղեց բեւր
պարտապանս դրութեանն օրինաց՝
յանմաչդ մերձենալ պատուզ։ Եւ որ
սաստիկն ածէ զերկիւզ, մերձենամ
զՀայր հաշտեցուցանել Որդւովդ՝
աշխարհի, հանդերձ իւրօք սիսալե-
լօքն։ Եւ որպէս քահանայապետն
իսրայեղի բերելով քաւութիւնն՝
ողջակիզաւ և արեամբ սրբականաւ,
մանաւանդ յաւետապատիկ և ան-
յապաղ միջոցաւ, ողբարկեալ զգեց-
մամբ զքառամասնեայ ապացոյցն
ուղղութեան, և պայծառն փայլ-
եալ երկուասանիցն լուսոյ բանից։
Զի և ոչ քահանայապետն իւրոցն
մատչի թարց, այս է, սրբանորոդ

անձամբ։ Եւ սերոբէն զկայծակն
ոչ բերէ՛ եթէ ոչ ունելիւք, որ է
զեկուցիչ մերոյ առաքինութեանց։
Զիարդ բազմաց, որ ոչ ինձ միայ-
նոյ, ունայն ես, ո՞ յիմմէ առցէ ի
լրմանէ։ Ի խաւարէ լոյս ո՞ ընկալ-
ցի։ Ի մեռելոց կեանս ո՞ ինդրիցէ։
Ի ծարաւոյ ո՞ արբցէ։ Ի քաղցելոյ
ո՞ կերակրիցի։ Յաղքատէ ո՞ փար-
թամասցի։ Ի չարէ բարի ե՞րբ ոք
եաես կամ լոււաւ։ Զի եթէ զտի-
ռապէսն յիս ոչ տեսի զբարի՛ շա-
մանդաղաւ մոտացս խաւարեալ զոյս
ի մթացեալ վայրաց հանից արտաքս։
Եթէ ինձ փակեցի զդրունս մարդա-
սերիդ, ում բացայց եղելոց ընդ-
դէմ։ Եթէ անհարազատ և անըմբոն՝
զնախագաղափարիդ յում զքոյդ
եդից պատկեր։ Եթէ յալս իջեալ
կամ խորոց նստեալ, զնստեալսն
անդ ե՞րբ վերաբերիցեմ։ Եւ եթէ
ընդ անձին ոչ իշխեմ նուիրել ա-
զերս, անհամարձակելի և լի ամո-
թով ունել զդէմն, զիա՞րդ գործու-

զացն զանբերելի չարիս; Եթէ հըպալին՝ իմ էր աղագաւ, թերեւս և ներելիք քեզ էր մարդասիրիտ, ոչ կամողի եթէ ոք կորիցէ; Բայց արդահա երկիւղ, մի դուցէ բարկասցիս, քաղցրդ, անպատկան ժառողիս, և բացեալ երկրի զբերան՝ կլցէ իբրեւ զհակառակմն Մովսիսի ի Հնումն, կամ հուրն մաքրիչ՝ կեղցէ: Զի եթէ միայն հալորդողացն ընդ քեզ և ոչ քաւողաց զգուշալի եղեւ, հիւանդաց և ախտաժետաց և յոլովից ննջեցելոց, զի՞նչ որ սպրդիմս ընդ ամենայնի:


Եւ արդ, եթէ ընդ կենացդ մահանամ՝ Երբ կեցայց. և առ լցող ծածկիմ խաւարաւ ո՞ր առցէ լցոյս այլ; Եւ եթէ առ փրկիչդ գերիմ, ո՞ղիս աղատեսցէ: Առ Ճշմարտութիւնդ ստիմ, և կամ առ Ճանապարհդ մոլորիմ, ո՞իրաւացուացէ և առաջնորդիցէ: Զի եթէ մեծիդ էր արտաքոյ վճիռն իմ մահու, թերեւս ոք արդեւք իշխէր փրկութեան

մատուցանել երախայրիս: Բայց զի անսուտդ ունի ատեան՝ ոչ ոք համարձակի անօթոյս բարկութեան զերեսս հայցել գատաւորիտ: Ոչ հրեշտակք, զի անկազմից բարւոյն նախկի սպասաւորք՝ և անզգուշալի հպողաց անյապաղ ոսոինք: Ոչ եւս սուրբք վշտակիցք. զի ում արդեւք իբր զի տեսանեն ոչ զյետին կալեալ տեղի, զոր աղաղակէ քարողն՝ Մի ոք յապաշխարողաց և յանմաքրից: Ոչ ինչ այսմ տեսանեմ բեկման կցորդ, և ոչ ինչ: Ոչ խաչահանուս և ոչ խոցովս, նա՛ և ոչ մատնիչս: Ոչ Հրեայս և ոչ հեթանոսս: Զի հաւատ, աւետարան, ուսումն և կրից մատնչին, և դարձումն խոցովին, և զղջումն խաչողաց՝ թէ ոչ ամենեցուն:

Զի որպէս արար Աստուած ըզմարդս շնորհաւ, և ես լինիմ սաւանայ հակառակ արարչին: Ո՞ր բերումն բանի, ո՞ր ծնունդ մաաց արժանապէս այսմ գացէ նշանակ.

բայց գատելն եւեթ խոհեմ անձամբ : Զի զի՞նչ միաբանութիւն լուսոյ և խաւարի, տաճարի և մեծ հենաց, Քրիստոսի և Բելխարայ: Փանզի սասոյդ է ասացեալն՝ և հաւատամ, Այս է Մարմին իմ՝ հաց. և Արիւն իմ՝ բաժակ: Զոյդ է կամելն, և եղեն: Հրամայեաց՝ և հաստատեցան: Եւ սրբոց զգալին ցուցաւ օրինակ ոմանց: Թէպէտ և խիստ աշակերտացն թուեցաւ բան, այլ կեանք է և բան, զի՞ Յիս բնակեցէ և ես ի նմա: Մեռեալ ուրեմն են անձաշակք. յաղագս, զի անշարժ մարմին՝ է անընդունակ հոգւոյ: Ուստի յերկուցն տագնապ է անձին. մաքուր հանդիպել ոչ կարեմ, և միանդամյն հեռանալ՝ վտանգիմ: Զերանիմ ախտիւք հանապազ, և վարակիմ կարիւք մարմնոյս, և ոչ կարեմ ազատ ի կրից լինել բնականաց: Զի և ոչ կամիմ, մանաւանդ ի դեմք զսոյն քան գնա գնելի է: Վասն զի ապստամբէ ի կատարեալ

կամաց և ոչ ինչ: Անհնարինք, երկրորդ, զկնի են Աստությոյ հնարաւորք, մարդկան. թէպէտ և նուազ: Եւ զի անփախչելի միանդամյն իցեմք արատի կազմածին, և անձուզորելի յապաբանելն, ոչ յերկինս ի վեր ելանել և անափ իրացն և կարդին լինել տեսող: Ոչ յերկիր մնալ անդործ, կամ ի ծովու գատարկ, կամ յարհեստ անիմաստ, և կամ ի քաղաքավարութիւնս անյարմարս: Ոչ ի գազանս անզօր, և ոչ ի թռչունս կամ ի ձկունս անկար: Ոչ բնութիւնք, և ոչ այլ ինչ ներհակ ըստ մարմնոյ և կամ վարք ըստ հոգւոյ: Որոյ աղագաւ Առաքեալ համարձակի ինչ և յանդոյիցն ընդդէմ ինքեան բերել կամաց՝ և գերազանց մնայ յամենայնի անվըթարն առաջաբերութեամբ: Եւ եթէ արդարանալ այլօք կամիցիմք բանեւք Առաքելոյ, յասելն՝ Այլ օրէնս ի մարմնի, և Գերեալ, և Տառապեալ այր, և Ո՛ ապրեցուացէ.



գիտելի զի և իւրոցն ասէ հարկաւորաց՝ բարառնաբար: Զհոսանս ո խնուցու ախտից: Անվտանդ արդարեւ են ոչ բերողաց ընդ նմա ըդկամս, և շնորհքն կցորդ մերոց լինի կամաց, ըստ որում, Ոչ ես՝ այլ շնորհքն ընդ իս Աստուծոյ: Եւ աստ Այլ շնորհքն Աստուծոյ ի ձեռն Յիսուսի Քրիստոսի:

Սորին վասն, թէպէտ ակամայք՝ կարդաւորիմք աղօթեւք, խառնակ իմն կամայի և ակամայի: Ի կամս ապաստան արար և Տէր զաշակերտ սըն, իբրեւ դիտակ կամողաց զներին գնալ Ճանապարհ և զանձուկն: Ուստի ոչ հուր, և ոչ սուր, և ոչ խաչ, և ոչ ժանիք դազանաց, ոչ վախից մղումն, ոչ ծովու ընկըլմումն. ոչ բանդ, ոչ սով, ոչ ծարաւ, ոչ քերանք, ոչ որով չարին լինէին փութացեալք սպասաւորք, ի նորին գաանել դժնեայ բարուցն ազգս և գործիս տանջանաց: Ընդունեաց ինչ ամեթ և քաջօրէն կա-



մողացն: Նա, և գործ արութեան առաջնոցն՝ այնքան զաեսողացն զարմացուցնեն զխորհուրդս, մինչ զի անմարմնոց տան կարծիս արարողացն. և անհմատգունիցն՝ քաջաց իմն առասպեկեալ բաջաղանս, որպէս ի վեր կամողացն զկարն ցուցանել: Երբեմն և ինքեանց արմանագործութիւնք եղեն սքանչելի, իբր զայն զի ասէր՝ Այս այն Բարելոն է, սիրանալով ընդ փութապէս պատուարացն կանգնումն:

Եւ արդ, արդարանալ իցէ ինչ. և ոչ ինչ, բայց թէ ի գատի զանձն պարտեալ: Անձամք անձին լինիմ պատրող, կամիմ և ոչ կարեմ. ըստուեր և սուտ կարծիս, անուրջ և պիտակ երեւումն. անդոյ երազ՝ և ընդունայն խորհուրդ. նաւարկութիւն անառագաստ և անզեակ. շինուած անհիմն, պատերազմն անզօր. աշարակ անբաւական. ելումն անգնալի. ի մէջ փշոց հեղձումն սերման. անդրէն դարձումն զմաձով

արկողիս զձեռն։ Զմեռեալն յիս
թաղելով զխորհուրդ։ զկենդանին
քամահելով զաւանդ։ ի փսխածն
անդրէն դաւանալով։ ամպ անջրդի
տարեալ ի հողմոյ և աղջամուղջ
խաւարի։ աղբիւր քաղցր և դառն
բզիւելով։ իսաւար և լցո զոյդ եղ-
եալ։ մահ և կեանք կցորդ։ աշխար-
հակալն և գերաշխարհիկն։ սուսն
և չշմարիտն։ կայունն և անկայն։
Ե՞րբ, և որպէս կարիցեմ։ Զի մա-
նաւանդ ընդդիմակն քան եթէ կա-
մակն յիս լինի դրումն։ Ընդ մահու
գնեմ դաշինո՞ւ և սակ իմ դժոխիք։
Աղօթեմ, ոչ որ ի Տեառնէ ուսայ
Հօր կատարիլ յիս կամաց, այլ զիմն
հաստատել վրիպանս։ Եւ եթէ ան-
ախորժելի դուն ուրեք անտեղին
ինձ եղեւ սերմն հօրն չարեաց, ոչ
որովք քաղել աստուածայնօքն
պարտէի ձեռամբ, այլ զի տապտ-
կալի յստէպ լինէր սարասոյ։
Թողում զյոքնաբեղուն ըն-
ծիւղեալ չարեացն զհոյլս՝ որոց

թարմատար եղէ պաշտօնեայ։
Զադահութիւնն անհաւասար,
զամպարտաւանութիւնն անսանձ,
զամպարհաւաճութիւնն անդաստի-
արակ, զմնափառութիւնն և զմնա-
պարծութիւնն անյար, զմրտմտու-
թիւնն անկարդ, զերկիւղ անբան,
զտրամութիւն անընարող, զբանն
անզգոյշ, զկերակուրն անպահապան
և զըմպելն, զծաղըն մեղկ, զհայե-
ցուածն արատ, զսէրն կեղծաւոր,
զատելն անչափ, զհեղգալն անու-
ղեղ, զխոնարհիլն՝ զեղծ, զբամբա-
սէլն անիրաւ, զհաւատն՝ յողդողդ,
զյոյմն՝ ցնդեալ, զցանկութիւնն՝
քարշեալ, զհաւասարելն՝ ախտա-
որ, զմերժելն՝ հեռաւոր։ Համայն
ասել, և ոչ որոց ի վերայ կալ պար-
տէի աստուածայնօքն նահանջել
կարգօք բանականապէս։ Միայնակ
զյատուկն եղից զվարիչն ոգւոց
յախտա, զցանկութիւնն։ Զհարա-
զատ դրժիչն, զանհաշտ սիրելին,
զբարեկամն օտար և զմերձաւոր

Թշնամին՝ յորմէ փախչել ինդրեմ
անչափ, և ընդ նմին լինիմ սիրով։
Ըստ որում ոչ զգեակ ամրացուցի
ոգւոյս և մեծ հատի խրամ՝ մուտ
առնել թշնամւոյն կենաց։ Որինակ
իմ գիշերամարտի՝ զգէմս ոչ ծանւ
եայ. զի ընդ իմոյն գնդի զօրու՝ և
պատերազմողացն մտին դասք։

Գակառեալ հայեցուածօք՝ զտէւ
րունականն քակացի սահման, մեւ
ծամեծացն զցանկ, և զարբութեան
տաճար ոգւոյս՝ լցի աւազակօք ախ-
տից, մերձենալով յոդիս պղծու-
թեան գիշերագէմ տեսլեամբ։ Զի
թէպէտ կատարելով զմահուն գոր-
ծի՝ ոչ երկիր պագի, այլ սակայն
զվէրս ընկալայ մահու։ Ծնդ Ալր-
բոյդ ոչ սրբեցայ, և ընդ անարա-
տի՛ ամբիծ ոչ եղեայ. ո՛ արդեւք
այլ մաքրիցէ և կամ սրբիցէ։ Կե-
նացդ պատահէլով՝ մեռայ, ո՛ ող-
բասցէ ողորմելով։ Զգերեալն եր-
բեմն լայր զիսրայէլ մարդարէն
ողբօք, զիս ո՛ արդեւք՝ գերչացն իմ

ոչ լինել յայտ։ Զանկեալն Սաւուզ
յայլազգեացն սրոյ, և զՅունաթան
մերձաւոր ոգւոյ Դաւթի սիրով,
գոչէ ախտակցաբար և անէծս անկ-
ման առաքելով տեղւոյն. ո՛ զիմն ի
գէմս ածցէ սատակումն։ Վիրաւոր
ոչ սրոյ, և անկեալ ոչ լերանց, այլ
տաճարի սրբութեան և բանին կե-
նաց։ Անձնամատն և ինքնատուր եղէ
անմատոյց թշնամւոյն, և զամենայն
անաշխատ ետու գերչացն։ Գողա-
ցան, ոչ օտարք, զվաստակս իմ,
այլ զՃոխութիւնն առեալ զիմ՝ ձը-
գեցի արտաքս։ Ծնդ անձին և զբա-
զումն՝ սպառնալեաց ետու մարդա-
սիրի՛՝ յանմեկաց յապտակս, յորմէ
յանզերծ ըմբռնիմ գուբ։ Զի եթէ
ի թուելն զիսրայէլ բարկացար,
քաղցրդ, Դաւթի, և այնքան հար-
ուածս որ ոչ մեզան արարեր ժո-
ղովրդեանն, զի՞նչ ես կրիցեմ որ
հաշտեցուցանել զերեսդ աղաջեմ
աշխարհի, և խոռովեմ յաւէտ։ Եւ
եթէ ընդ քահանայիցն ծուլից բա-

զումք անկան յիսրայելէ, և առաւ տապանակն յայլազգիս, զինչ և Արեամբ քո ոչ կրիցէ գնեալ հօտո՞ ընդ անմաքուր իմ պաշտաման: Վասն որոյ շարժմունք երկրի որպէս առ քոյն չարչարանօք, զի և նոյն յանկումն թէպէտ և այլ թուի տարագ: Սրբոց և անսրբոց յոլով վից թաղեցան մարմինք ի սիրտ մըտանելով երկրի խորոց, զի հայիս սաստիւ և գողայ: Սովք անընդհատ, և սուր հանապաղ. յարձակումն թշնամեաց, և գերումն աշխարհաց բազմաց: Խուճապ բազմազան արկածից անթուելեաց, որոց ևս պարտապան և առիթ, կցորդ և գործօնեայ մանաւանդ: Յիս սուր քո և ընկլումն և մահ և ապականութիւն:

Փրկեա զժողովուրդ քո և օրհնեա զժառանդութիւն քո, հովեա և բարձրացո մինչեւ յաւիտեան: Զի գին արեան քո է և ազատեալ չարչարանօք: Միշտ քաւեսցէս

զանսոււտք կատարելով խոսառումն, զհանգուցեալսն յանուն քո, ամելով Այս է մարմին իմ որ բաշխի ի թողութիւն բազմաց: Զինչ և քեզ յառնելով զայդոսիկ հարկ եղեւ, եթէ ոչ և մարդասէր քո կամք: Զնոյն յիշատակեսցէս գութ: Մի յանարժանութիւնս իմ հայելով՝ զշնորհսդ արգելցես, ամենառատու: Եւ մի զսէր քո հատցես Հօր և ըզինամ քո հոգւոյ: Հաւատացեալն ի քեզ փրկեսցի եւեթ հոգի, և պարգեւ քո կատարեսցի աննիազ: Խորք բացցին անդնդոց, և ելցեն ամբարեալքն ինմա աւարք մերոցն, որպէս երեւմն յիշանելն քո մահուամբ: Մի յաղագս իմ յուսացեալքն յահեղ քո մեծութիւնն անտես լիցին: Առուաջի քո եմ, Տէր, թէպէտ և ոչ հատուցանել ընդ ամենայնի չարեաց կարիցեմ, սակայն ժաիմ յանդըգնելով՝ զի մի ընդ իմ կրիցեն ինչ որք փրկել քեւ կամեցան: Զերեսդ քաղցրահայեաց յինէն:

դարձուցեալ՝ մի և ի քո հաւասացելոյ ձշմարտէ։ Գբարիդ, յաղագս իմ, կամեցող կենաց աշխարհի, մի առ քեզ կալցիս։ Գիսաղազութիւնն երկնաւոր առհաւատաչեայ Եկեղեցւոյ խոստացեալ և աւանդեալ, յաղագս իմ վրիսակիս՝ մի լուեցուցես։ Տուրք աստուածառաքք յուղիզ քո հաւատացելոց՝ մի վասն իմ բարձցին զազրութեանց։ Քաղցրաշունչ հեղեալ օդ կենաց՝ մի շնչեսցէ ժանդ ապականիչ, ընդ ժանդացելոյս ոգւով։ Ամպք տեղածուք, շայեկան՝ կանուխ և անագան, մի բերցին վայրակս անձրեւաց ընդ վայրենացելոյս։ Ծովք մի զնաւս բեկցեն ընկղեմլով զելեալսն ընդ ընդլուզելոյս յատակս խորոց ախտից։ Գետք, զանցեալսն ոտանաւորք՝ մի յաղթահարեսցեն ընդ հեղեղելոյս հեշտութեամբ կրից։ Սուր զբերան մի վերացուացէ ձպամամբ ձեռին՝ հատանել զգառինս հօտի քո խաշանց, ընդ խողխողե-

լոյս ընտանի սրով։ Դժոխոք մի դարձեալ ընդարձակ զանձն առնիցէ զնեղեալ ընդունել զմաքուր փրկեւոցն անձինս՝ ընդ արժանապէս դատապարտելոյս մարմնով։ Գեհեան, հանդերձ ինեւ՝ մի ընկալցի զոք, որոց զանմահդդ մատուցաք խորհուրդ, առիթ փրկութեան և օժանդակ կենաց։

Ընդ նաւասայս ախմարի, մի սուզեսցին յանդունդս, նաւապետքարի։ Ընդ անկեալ զօրավարիս՝ զօրականացն նպաստ լիցիս, թագաւորքարձրեալ։ Ընդ քակաեալ շինողիս՝ զատաճար քո պահիցես, ձարտարապետ։ Ընդ անհամանալ աղիս՝ ախորժելի կամաց քո մասցէ կերակուրն բարեաց մարդկան։ Ընդ խաւարել լուսոյս, Արեգակնդ, ծագիցես ի բարձանց որոց ի խաւարի։ Ընդ մեռելոյս կենօք՝ տացես յոյս կենաց, ձշմարիտ կեանք։

Ընդ ննջելոյս ի մահ, յանուն քո սուրբ ննջեցելոցն՝ լիցիս յարու-

թիւն ձայնիւ։ Յաղագս որոյ զամենայն կրեցեր, և զմահ, անմահդ։ Զբորբոքումն ջահից և լապտերաց յանուն քո վասն նոցա, ընկալ, լոյսըդ Հօր, Յիսուս, և զբուրումն ինկոց ի յիշատակս նոցա, հոտ կնդրկի կենաց։ Ի պայծառանալ սրբութեան քո աաճարին վասն նոցա, փայլեսցես զոդիս նոցա, անբաւդ ճառագայթ։ Զյյիշատակս սրբոց զոր տօնեմք քեզ ի հաճոյս՝ արասցես բարեխօս լինել նոցա։ Եւ ամենակատարն իումբ տօնից աէրունականաց՝ առիթ սրբութեան նոցա լիցին։ Ընդ վերանալ ձեռացս՝ թեթեւացին ծանրութիւնք նոցա։ Ընդ բեկանել անմահ Հացին՝ կերակրեսցին կարօտքն ոդիք։ Ընդ բաժակին՝ արբցեն զանմահդ Արիւն, և ընդ մեր ճաշակեսցեն զկեանդ մշտաբուզ։ Ի քոյդ գարձցիս զոր արարեր գութ, և մի ընդ իմ՝ ունայն առներ զքո շնորհ։ Զոտս ի մտանելն առաջի քո մի

բեկաներ, որ զկաղս գնացուցեր բանիւ։ Զձեռս մի գոսացուսցես ի մընելն՝ որ զիսմրացեալն հաստատեցեր աջ։ Զպարս ատամանց մի քականքը յըմբոշինելն ինձ զքեզ, որ զբերան բացեր զհոմերն։ Հեղուլն յիս զանապակն Խորհուրդ՝ մի պայթեսցին երակք ոգւոյս, այլ ունակութիւնք սրբեսցին անձինս։ Անմահ քո Մարմին, և սուրբ քո Արիւն՝ լուսացէ յամենայնէ զմեզ յաղաոյ, և ի զազրատեսակ խորհրդոց։ Մի ամաչեսցուք կալ առաջի մեծի քո սեղանոյ՝ այլ բերկրեսցուք աշալըր ջութեամբ սիրով քո առ մեզ։

Հուրն շիջցի ապականի՛ ի ցողելն զշիթդ երկնային։ Խոնան տուչորեսցի աղմոյ վնասողին՝ ի հրոյդ աստուածայնոյ։ Վատառք բերողին ուխիցն անօրէնութեան իցցի սաստիւ քո մեծաւ։ Սպասաւորք և արբանեակք վատթար իրին նահանջեսցին ի զօրաց քոց երկնաւորաց։ Սպառազէնքն լքցին ի հզօր քու

Հյու Դողասցին, սարսեացին, ընդ
երկրաւ մացեն սանդարամետակա-
նացն ջոկք՝ յերեւելն քո փառօք;
Խորհուդքն խափանեացին, և բան-
քըն ցրուեսցին յարուցելոցն ի վե-
րայ քո ստեղծուածոյս; Փրկականն
յիս հաստատեսցի խորհուրդ, և զո-
րացի հաւատօք սասանելոյս ոգի
գործօք:

Հաւատամ, որոց և ոչ ես զօրեմ՝
կարողիդ եւեթ առնել կամաց, որ
ձգեաց զերկինս և հաստատեաց զեր-
կիր; Հաւատամ, թէպէտ և ոչ մերձ,
զի հաւատոյ է գործ, առնել ձեռօք
քո անարատ զմարդն; Պատուիրա-
նին և դրութեան տեղոյն; Խար-
մանն և ինամոցն; Զուրցն ապա-
կանութեան հեղեղի, եւ հակառակ
շնողացն ցնդման; Կոչման հայրա-
պեաին և ընտրութեան; Պատարա-
գին օրհնութեանն իսահակայ, և
աեսլեանն Յակոբայ; Երեւանն
Մովսէսի և փրկութեանն իսրայե-
լի; Առաջնորդութեանն Յեսուայ և

կործանմանն Երիքովի; Զօրութեան
դատողաց և օծութեանքահանայից;
Յաղթողութեան թագաւորաց և
աեսութեան մարդարէից; Յայտնու-
թեան Խորհրդոյն և առաքման Աս-
տուածորդւոյդ; Բանիդ մարմնացե-
լոյ և բժշկիդ զիկրս ոգւոց; Կամօք
չարչարելոյդ և մարմնով մեռելոյդ,
եռօրեայ յարուցելոյդ՝ և աշխարհի
լոյս ծագելոյդ; Զաւաքեալսն ա-
ռաքողիդ և զԱւատարանն տուղիդ;
Փառօք վերացելոյդ և ընդ աջմէ
Հօր նսաելոյդ; ԶՍուրբ Հոգին ա-
ռաքողիդ և զաշխարհ նորոգողիդ;
Միւսանդամ եկողիդ և պարգեւաց
բաշխողիդ; Հաւատացի և հաւա-
տամ ամենազան առնել զինչ և
կամեսցիս; Այսոքիւք և զիմս ըն-
կալցիս աղերս մաղթանաց:

Որով զՄահաք և զաւազակն ար-
դարացուցեր; Որ զմաքսաւորն ապ-
րեցուցեր, և զպունիկն մաքուր և
ուրախ արարեր; ԶՄանասէ քաւե-
ցեր, և զԵղեկիա բժշկեցեր; Զախ-

արս բարձեր մարմնոյ, և զցաւս
վերացուցեր ոգւոյ, և շնորհս ոչ ինչ
պահանջեցեր: Մի ի դէմս իմ դարձ
ցին քարինք յանդիմանութեան վեւ
բատրեալդ բանի, սրբելոցն անձամբ՝
դիւրին, այլ ոչ քաւչաց աշխարհի:
Մաքրոց դործ՝ այլ ոչ սրբելոց
պղծոց:

Արդար յամենայնի ես, Տէր, և
ի դատի՝ յաղթես իրաւամբ: Մի է
բան մեր, և բիւր հազարաց ճշմար-
տիդ, որով լռեն իմաստունք և դա-
դարեն խորհրդականք: Եթէ քննես՝
ոչ արդարանամ, և եթէ ի կշեռս
դիցես՝ վերանամ թեթեւ: Եթէ կա-
միս՝ սրբիմ, Տէր, և եթէ քաւես՝
արդարանամ, Աստուած: Եթէ կո-
չես՝ յառաջատեմ, և եթէ երես դը-
նես չարագործիս՝ սատակիմ յի-
շատակօք: Չեն քեզ ծանունք, և ոչ
ես դիմագրեալ. ահա զկամս ցուցից
և զվաճիռն հատից: Մահ փոխանակ
եղեց սխալանացն, և կորուս՝ յան-
ցանաց:

Բարձ զչեշտալին ինձ մարմնոյ,
և տուր զոր փափագիմդ: Միայն
ընկալ զիս ըստ կոչմանս, և գասեա
ընդ օծեալսն: կատարեա զձեռս
պատարագի, և սրբեա զսիրտ Խոր-
հըրդոց: Մի զայրասցիս, յոյսդ աշ-
խարհի, և մի ձգեսցես զձեռսդ ու-
նայն: Մի շատ ինձ զայդոսիկ վարկ-
ցիս՝ կամեցողդ ամենայնի բարւոյն:
Եւ եթէ ընդդէմ քեզ ասացեալքդ
է, մասնաւորեա որպէս և կամիս,
միայն ի փրկելոցն թուեա դաս: Եւ
եթէ խոսամանն չիցէ քո հահառակ,
ասացից, չուր ինձ պատրաստ, և
տանջանք մշանջենաւորք, եթէ ա-
խորժելի և գթածիդ կամաց: Բայց
բանն զոր ետուր՝ անսուտ յասելն
է, Ոչ եկի կոչել զարդարս՝ այլ ըզ-
մեղաւորս. և, Ոչ բժիշկ ողջոց՝ այլ
հիւանդաց:

Որ զերկնայինսն ուրախ արարեր
վասն միոյ փրկել մեղաւորի, և զոչ-
խարն բարձեր զկորուսեալ, և ըզ-
դրամն գտեր զթաղեալն յաղբ,

յախտան: Զանառակին՝ կոչեցեր որ
դի հօրն փառաց, և զուարակդ զեւ
նար պարարեալ: Զաշխատեալսն՝
առ քեզ կոչեցեր բեռամբ, և զլուծ
եղեր զքաղցր, և զբեան թեթեւ:
ԶՀօր ցուցեր կամս՝ զի ոչ ոք կու
րիցէ, և զմիսիթարութիւն աւետա-
րանեցեր Հոգւոյն: Զքեզ ետուր
փրկանս հրաւիրելոց, և յառաջ-
նումն՝ գերելոց, և յանձառ կոչե-
ցեր փառս: Զգանձ քո բացեր ա-
ռատ և զմարդարիտ շնորհեցեր
գնողաց: Զօթեւանսն ընդարձակե-
ցուցեր մտղաց, և օրհնութեամբ
հաստատեցեր Հօր: Ընդ հրեշտակս
խոստացար դասել, և ընդ անմար-
մինսն միաւորել: Ընդ վերինսն եր-
գել փառօք, և զամենասուրբդ փա-
ռաւորել զԵրրորդութիւն:

Եւ արդ գոհանամ, Տէր, զքեն՝
որ այսմ ամենայնի հաղորդ զիս ա-
րարեր, բանի և իրի: Գոհանամ,
որ արժանի զիս արարեր անձառ
քո Խորհրդոյ: Գոհանամ, որ զոդի

իմ հաստատեցեր գրովք սրբովք
յաղագս կամաւոր քո չարչարանաց:
Գոհանամ, որ զհաւատ իմ անշարժ
արարեր, թողութիւն լինել Մարմ-
նով քո և Արեամբ: Գոհանամ, որ
զանարժանութիւնս ոչ արարեր ան-
տես զիմ, այլ զենմամբ քո քաւե-
ցեր զննջեցեալսն որ այժմ յիշա-
տակեցան: Գոհանամ, որ սրբոց
բարեխօսութեամբ որք յիշատակին
յահագին քո Խորհուրդ, ընկալար
ի ձեռաց իմոց զընծայս քո պատա-
րագի: Գոհանամ, որ փափագելիդ
երկնաւորաց և երկրաւորաց՝ ձրի
պարգեւեցար: Գոհանամ, զի զոր
ոչ տեսին նահապետք և մարգարեք
աչօք՝ ականատես իսկ Եղայ: Գո-
հանամ, զի հուր Աստուածութեան
քո ոչ կիզու զիս, այլ մաքրէ և
ձուլէ վերսաին: Գոհանամ, զի լցո
փառաց Մարմնոյ քո և Արեան զաչս
իմ ոչ շրտուցանէ, այլ լուսաւորէ
պայծառանալով: Գոհանամ, զի
զՃաշակելի իմ լցուցեր անբաւ

քաղցրութեամբ, և զոդի իմ անշառ խնդութեամբ: Գոհանամ, զի զհոտոտելիս իմ պարարեցէր հոտով քո անուշիւ, և զսիրա իմ ցնծութեամբ: Գոհանամ, զի զձայն օրհնութեան երկնաւոր լուայ ի կատարման քո Խորհրդոյ, և ընդ անմարմինմ զուարձացայ: Գոհանամ, զի զոր ոչ բառնան երկինք՝ բառնամ ձեռօք: Գոհանամ, զի միանդամայն տաճար քեզ արարեր զանձն իմ, և օթեւան սրբութեան: Գոհանամ, զի միշտ զմեռելութիւն իմ կենդանացուցանես ճաշակմամբ, և զհեանդութիւն իմ բժշկես հաղորդելով: Գոհանամ, զի փոխանակ երկրաւորի երկնաւոր զիս արարեր, և ի մարդկանէ հրեշտակ: Գոհանամ, զի զանչափ զպարգեւ քո առնում ձրի և տամ առատութեամբ կարօտելոց: Գոհանամ, զի զցու քեզ ետու մատակարել. զի մահ քո աւարեաց զգժոխս հանելով զգերեալսն, և այժմ ի ձեռս իմ զնոյն

կատարես խորհուրդ: Գոհանամ, զի զոր ոչ ունէի ետուր, ի վեր քան զյօյս և զակնկալութիւն: Գոհանամ, որ զբարերարութիւն քո հանապաղ առնես պատարագելով, և զմէր քո ցուցանես քաւելով: Գոհանամ, որ ընդ անչափ քո գթութեան՝ դեղ ետուր զՄարմին քո կենաց, և զԱրիւն քո փրկութիւն աիեզերաց: Գոհանամ, և զՀօրէ քումմէ, որ ոչ խնայեաց յՈրդիդ սիրելի աալ վասն մեր փրկանս, և մինչ ի սպառ զնոյն կամի: Գոհանամ, և զՀոգւոյն Արբոյ, որ ընդ Հօր և ընդ Որդւոյդ զկեանս մեր կամի և նորոգէ գործակցելով ընդ Մարմնոյ քո և Արեան: Վասն որոյ փառաւորեսցուք զքեզ ընդ նոսա, այժմ և միշտ:

ՆՈՐԻՆ

ԽՐԱՏ ՈԳԵՇԱՀ

ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՆՈՐԻՆ

ԽՐԱՏ ՈԳԵՇԱՀ

ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Ի ԽՆԴՐՈՅ ՈՒՄԵՄՆ

ՄԱՆՈՒԿ ՔԱՀԱՆԱՑԵ

Սկիզբն պատուիրանաց՝ Երկիւղ
Տեառն է. ըստ այնմ՝ Երկիւղիւ
Տեառն ամենայն ոք խորշի ի չարէ:
Եւ, Սկիզբն զգօնութեան՝ Երկիւղ
Տեառն: Եւ, Երանեալ է այր որ
Երկիւցի ի Տեառնէ: Ընդէ՞ր. զի ի
պատուիրանս նորա նա կամի յոյժ:
Զի իբր յարմատոյ՝ յերկիւղէ Տեա-
ռըն ամենայն պատուիրանք ընծիւ-
ղին: Իսկ ստունկանողք Երկիւղին՝
Խոտորին յամենայն պատուիրանաց
Տեառն, և վասն այնորիկ դատա-
պարտին: Որպէս Աղամ, և կինն,
և օձն, և կային, և դարն Նոյի:

Առդոմայեցիք և Քանանացիք և որք
յանապատին. և որպէս ի կատա-
րածի ի հուրն յաւիտենական: Ա. Ա. Ա.
պահողք պատուիրանացն հանդերձ
երկիւզիւ, ժառանգորդք լինին ար-
քայութեանն ընդ ամենայն սուրբս:

Բայց օրինակ երկիւզի Տեառն
այսպիսի է. զի զնա միշտ մերձ
տեսանիցես՝ որպէս և է, ի կալ, ի
գնալ, ի ննջել, և յառնել, և յու-
տել, յըմպել. որպէս ասէ մարգա-
րէն, Յառաջադոյն տեսանէի զԾէր
առաջի իմ յամենայն ժամ, զի եր
ընդ աջմէ իմմէ զի մի սասանեցայց:
Ա. Յապիսի մտօք՝ անշարժ ի պատ-
ուիրանաց Տեառն լիցիս զօրհանա-
պազ: Ի խոհականութեան, յոզջա-
խոհութեան, յարիութեան, յար-
դարութեան. յաղօթս, ի սէր, ի
բանս Ճշմարտութեան, ի պահս
պնդութեան, ի ժուժկալութեան, ի
խոնարհութեան, ի համբերութեան,
յողորմութեան, ի քաղցրութեան,
ի հեղութեան, ի հանդարտութեան,

ի լոռւթեան, ի գթութեան, յար-
բանեկութեան, ի հիւրասիրութեան,
յաստուածասիրութեան. ի հաւա-
աըս, ի յցյա, յերկայնմառութեան,
յուսումնասիրութեան, յընթերցա-
սիրութեան, և բնաւին յամենայն
արդարութեան, զոր միանդամ եր-
կիւզ ուսուցանէ:

Զգոյշ լեր անձին քում սրբու-
թեան. զի գլուխ քահանայութեան
եւ կրօնաւորութեան քո՝ սրբու-
թիւնն է: Զի գրեալ է, Սուրբ եղե-
րուք՝ զի ես սուրբ եմ Տէր Աստ-
ուած ի միջի ձերում: Մի տացես
տեղի ամենեին աղաւղութեան խոր-
հըրդոց, արեամբ չափ ընդդէմ կաց-
ցես արիաբար: Զի թէ սակաւ ինչ
մոււա գտանիցէ՝ բազմանայ ի վերայ
քո մտածութիւն չարութեան, և
խաւարեցուցանէ զորի քո օր լստ
օրէ, և վարէ զքեզ ի գործն գար-
շութեան: Պահեա զաշսդ ի տեսա-
նելց՝ որպէս պատուիրեաց Տէր: ԶՃառս կանանց աղաւղութեան մի
լսեր բնաւ:

Մի ստանար քեզ ի նոցաննէ մայրագիրս և քոյրագիրս, կովկիթս և սպասաւորս. ասլա թէ ոչ ունիս ստանալ և կնագիրս: Եւ մի առազդականս յաճախսեր երթալ, զի մի պատճառ քեզ կործանման իցեն: Առէպ ստէպ յաղօթս կացցես հանդերձ զլջմանը և արտասուօք յամենայն ժամանակի: ԶԱստուած միշտ ի մտի պահիցես, և զյիշատակ սիրոյ նորա յոդի քո հաստատեսցես: Եւ պահօք զանձնդ ամրացուցանիցես: Միս մի ուսիցես՝ բայց եթէ հիւանդանայցես կամ ծերանայցես. սակայն զնպատակն մինչեւ ի մահ պահիցես: Գինի՝ մի բնաւին, բայց եթէ ձաշակիցես և զԱրարիչն օրհնիցես, և կամ ի բժշկութիւն վարիցես. սակաւ՝ հանդերձ երկիւղիւ: Յիշիցես զորդիսն Ահարոնի և ըզհրոյն կիզումն, և այսպէս ամենեւիմբ զցանկութիւն շիջուցես: Ապա թէ յաղթիս ի ցանկութենի խորհրդագըք՝ մի թաքուցաներ, յայտ-

նեա խոստովանութեամբ, և այնպէս ազատիցիս: Ա.ՅԼ Եթէ ծածկիցես և անմաքուր ի խորհուրդն մերձն նայցես, գիտասնիր՝ զի յաւիտենից կորնչելոց ես: Նա, և նոյն ինքն խորհուրդքն այնպէս գիւրաւ շիշանի յորժամ յայտնիցես. ապա թէ ծածկիցես՝ իբրեւ հուր ընդ յարդիւ, առաւել բորբոքի: Յորժամ կարի ստիպէ խորհուրդն զազրութեան, ընդ միտ ած զամօթ յաւիտենական և զտանշանսն մշտըն ջենաւոր և զնախատինս մարդկան, և այնպէս շիջանի: Բորբոքումն սիրոյն Աստուծոյ առաւել շիջուցանէ:

Սովորութիւն ընդունելութեան առ մանկունս մի կալցիս, և մի առ նմանպիցս քո: Մի խօսիցիս և մի ծիծաղիցիս ընդ նօսա, զի մի ի փորձութիւն սատանայի անկանիցիս: Զեռն ամենեւին ի նոսա մի տանիցիս, և ոչ ըստ միոյ պատճառի. բայց եթէ հարկ իցէ վարոցաւ խըրաւաւ ի գիւղող ժամանակի: Թո՞ղ

զհաց մինչդեռ քեզ ալիսիցի, նոյն սկզբ և զջուր, և մի յագիր քնով. զի սոքա զախտս պարաբեն և զմիտս խաւարեցուցանեն: Մի սիրեր դդեւ դեցկութիւն հանդերձն՝ և ոչ զմիոյ, զի նիւթ են սոքա խորհրդոցն սրու նըկութեան, և փառասիրութեան, և մնափառութեան:

Յաներկիւզս և յարհամարհիչսս պատուիրանի Տեառն, և ի զազրաւ խօսս՝ մի յարիցիս, զի մի զմիտս քո ապականիցեն: Մերձաւոր Եր դու ծերոց և Երկիւզածից Աստուծոյ, և սպասաւորեան նոցա, զի շահիցիս ի նոցանէ խրատու:

Ի ձեռին քո կալցես զդիրս սուրբըս՝ և ի նոցանէ խրատիցիս, մասնաւանդ՝ զվարս հարանցն սրբոց: Ուսցիս եթէ զիարդ զերիտասարդութիւն թառամեցուցին Տդնութեամբ, և սուրբ տաճար եղեն Աստուծոյ, և ժառանգորդք արքայութեան:

Դաստարկակեաց մի լիցիս, զի ի

նմանէ առաւել զօրանայ խորհուրդն չարութեան: Բաժանեա զօրն քեզ՝ ի գործ, յաղօթու և յընթերցութիւն: Յաղօթու կացցես յառաւոտու՝ և մի ծուլացիս ի քուն, և ի միջօրէի, և յերեկոյ՝ ի քնոյն: Զայդ սովորութիւն կալցես առաւել քան ըզհասարակաց կարգն: Եւ այսպէս աղօթիցես: Նախ օրհնիցես զԱստուած որչափ և գիտիցես, և ապա խնդրիցես՝ նախ զհոգեւորն և ապա զմարմնաւորն, և ապա գոհանայցես: Բայց յառաջ քան զամենայն՝ հասարակաց աղօթիցես, և ապա անձին քում՝ բազում խոնարհութեամբ: Մաքրիցես զմիտսդ յոխակալութենէ, յատելութենէ: Ի մախանաց, ի նախանձուէ, ի փառասիրութենէ: Ի մարդահաճութենէ, ի մնափառութենէ, ի բաւասասիրութենէ: Ի բամբասանաց, ի չարափոսութենէ, ի թշնամութենէ, յամբարտաւանութենէ, յամբարհաւաճութենէ: Յանձնասիրութենէ, ի կեղծաւորու-

թենէ, և յամենայնէ յայսպիսեացս՝
զի աղօթքն քո սուրբ ելանիցեն։
Դիտասսջիր, զի թէ թշնամեաց քոց
չար լինել աղօթիցես՝ ոչ լսէ Աս-
տուած, և առաւել զայրանայ ի վե-
րայ քո և դատապարտէ։ Նախ թող-
ցես յանցաւորին քում, և աղօթիցես
զարժանն, և ասկա քոյոց յանցա-
նացն խնդրիցես թողութիւն։

Սրբեա զքեզ յամենայն ադահու-
թեան օրինակէ։ Մի սիրեր և ոչ զմի
ինչ զնիւթ՝ թէեւ հարկաւորաբար
ստանայցես։ Եւ թէ պատահի առ-
նուլ զինչս քո ի քէն՝ մի տրտմիր
բայց ընդ հոգւոյ սակաւ սրակա-
սութեան՝ մեծապէս սուգ կալցիս.
բաւական համարեսջիր զհանդերձ
և զկերակուր։ ԶՏէր ստացիր քեզ
փարթամութիւն՝ և սպասաւորեա
նմա զգուշութեամբ, և ամենայն
ինչ յաւելցի քեզ։ Մի լինիր ըն-
չաժողով, և մի որսար զմեղուս։ այլ
լէր գու իմաստուն մեղու Փրիս-
տոսի, և յոդի քո ամբարեա զպատ-

ուիրանս նորա, զի Ոչ կարես եր-
կուց աերանց ծառայել։ Ապա թէ
պարզաբար ոք իցես՝ չափով զհար-
կաւորն ստացիր, զի մի յերանելի
աղքատութենէն վրիպիցիս։ Եւ եթէ
սիրես զստանալն՝ մի վամն քո, այլ
վամն եղբարց մատակարարութեան։
Միրեա զողորմութիւն ըստ գոյին
քո, և տուր կարօտելոյն յամենայն
ընչից քոց։ Մի համարիր զինչս քո
քեզ՝ այլ Աստուծոյ, և զքեզ՝ ըս-
պասաւոր։ Այնքան է քո՝ որքան
և այլոց։ Ապա թէ այսպիսի մտօք
չիցես՝ դիտասջիր, զի ի դատաստան
ադահից անկանելոց ես։ Տուր կա-
րօտելոյն ի յարկէն, ի հանդերձէն,
ի կերակրէն և յըմբելոյն։

Մի ապաստան լիցիս ի կրօնա-
ւորութիւն քո, զի մի նման յիմար
կուսիցն յառագաստէն արտաքս ան-
կանիցիս։ Զանասջիր սիրել զընտա-
նիս որչափ զօտարա՞ թէ բարեպաշտք
իցեն։ ապա թէ չարք և աներկիւզք
իցեն, ամենեւին հրաժարեաց։ Զան-

Ճըն քո ամբողջ պահեա: Եթէ կարող իցես՝ ձեռն տուր քոյոցն հոգեւորապէս, ապա թէ չիցես կարող, այլ և վնասիցես, փախիր ի նոցանէ և բնակեա ուր օգուան քո է:

Խոնարհամիտ լեր առ ամենեան, առ մեծամեծս և փոքրունս: Սպասաւորեա ծերոց խոնարհութեամբ և մի ամբարտաւանիր: Հնազանդ լեր ուսուցչին քո մինչ ի մահ, և զամենայն ինչ ըստ խրատու ծերոց առնիցես: Զկամս քո ամենեւին ուրացիր: Զքեզ քան զամենայն ոք յետին և անարժան համարեսնչիր: Մի պարծիր ի շնորհս ինչ քո, զի ամենայն Աստուծոյ է: Յասկոս մի ուսանիցես՝ այլ հեղութեամբ և հանգարառութեամբ զամենայն ինչ առնիցես: Շե և քէ և նզ՝ բնաւ մի ու մեք ասիցես, զի մեծ պատուեր է ի Գրոց վասն այդոցիկ: Ապա թէ յայդոսիկ սովորիցիս՝ ի բաց կացես ի քահանայագործելոյց:

Վրէժինդիր արտմեցուցչին քո

մի լինիր, այլ ջանասնիր բարիս նոցա առնել՝ զի մեծ համարձակութիւն կալցիս առ Աստուծոյ: Զաւտեկիս քո մի ատեր, բայց զատելիս Տեառն ատեա առաւել: Ի բազմականս՝ գահասէր մի լինիր, այլ զամենեսեան առաւել մեծարեա քան զքեզ: Ծաղրասէր մի լինիր, և մի զբոսասէր, և մի զբոյցասէր. զի գոքա ամենեւեան վասնիչք են շրնորհացն Աստուծոյ: Մի զոք յականէ խոտեր այպանելով, զի մի և գու խոտիցիս ի Տեառնե:

Զկաղ, և զկոյր և զնման սոցա մի շզուեր, զի մի զայրասցի Արարիչն: Զաղքասն յորժամ աեսանիցես՝ յիշեա զՏէր եւ զաղքատութիւն նորա վասն քո, և ջանա հազորդել նմա: Բարի գործել՝ մի պատահամբ առնիցես միայն, այլ և փոյթեալցիս հոգաբարձութեամբ առնել: Ի առւրսն զուարթառաս լեր, և մի փոխանակ ցորենոյ՝ եղիձ բուսցի քեզ: Ի սէր անկեղծաւոր

լեր, և ի քան՝ ձշմարիստ։ ի հաւասը անյողգոդ, ի յոյս՝ աներկբայ։ Եւ այդոքիւք՝ գիւրի քեզ ամենայն առաքինութեան հանապարհք։

Միշտ սուդ կալցիս յանձին քսում, և սիրիցես զարտասուս, զի դոքա են նշանակ սիրոյ Աստուծոյ։ Սակայն, թէ եւ աղքիւրս արտասուաց ունիցիս՝ մի հպարտանար, զի այն չնորհք ք Աստուծոյ են։ Սիրեա զտալ քան զառնուլ. զպատուել՝ քան զպատուիլ. զյուսանել՝ քան զյուսուցանել։ Որչափ ի մարմնի ես՝ կարօտ ես ուսման։ Ծոյլ և թոյլ և լքեալ մի լիցիս, զի մայր ամենայն չարեաց՝ պղերգութիւնն է։

Ի աելի ազօթից զգաստ լիցիս, մի միայն մարմնով՝ այլ և հոգւով։ Սիրեա զաւուրս տօնից, մի վասն կերակրոյ այլ վասն խորհրդոյն որ ի նոսա։ Խօսեա, զի լուռ բնաւ չվայելէ, այլ զոր ինչ արժանն է։ սակայն մանկան՝ ըստ հարցմանն պատասխանելն է դովելի։ Մի զաշ-

սրդ զվայրով ածիցես, և մի զմիտադ ցնդիցես, զի մի մոլորիցիս։ Մատոննկդ ի խրատ, և զիսորհուրդով՝ ի քննութիւն, և ընտրեա զօգուտն ի նոցանէ։

Ի վայր կալ զաշսդ, և ի վեր զմիտադ՝ զի միշտ ընդ Աստուծոյ խօսիցիս։ Յիշեա զԱստուծած ընդ տուրեւառութիւն շնչցոյ՝ թէ հնարէ, զի նովաւ ապրիցիս ի խաղենց սատանայի։ Մինչ մանուկ ես՝ սիրեա զառաքինութիւն և գործեա զնոսս, զի մի յորժամ ծերասցիս ապաշաւիցիս։ Զի ծերութիւն՝ ակարութեան է, եւ ոչ ձկնութեան։ Յաղթեա որկորսառութեան գիւրին՝ պահօք, և պոռնկութեանն՝ աստուածիրութեամբ, և արծաթսիրութեանն՝ ողորմութեամբ, և տրամութեանն՝ անընչութեամբ, և բարկութեանն՝ հեղութեամբ, և ձանձրութեանն՝ արութեամբ, և ամբարտաւանութեանն՝ խոնարհութեամբ, և ամբարհաւաճութեանն՝

անարդախոհութեամբ, և ամենեւ ցունց՝ ազօթիւք: Ստացիր զալօթս արտասուօք. և զիսնարհութիւն և զանապատ և զաշխատութիւն, և տիրես ամենայն ախտից:

Մայր բարեաց առաքինութեան՝ է խոնարհութիւն, և հիմն ճկնութեանց՝ է համբերութիւն: Կատարած առաքինութեան՝ է սէր, և սկիզբն՝ երկիւղ. բայց ստացումն սոցա՝ է յօժարութիւն կատարեալ: Բուծանէ զմանկութիւն՝ ունկընգրութիւն, և ուղղէ զառաքինութիւն՝ պարզմառութիւն, և ստանայ զսոսա՝ որ հաւատայ ամենայնի: Եթէ կամիս մեծ լինել՝ խոնարհ լեր: Եւ Եթէ կամիս յառաքինութիւն հասանել՝ հրաժարեա որ ինչ երկրաւոր: Առաւել քան զամենայն՝ ստացիր զընարովութիւն: Զչափ անձինքո ծանիր յամենայն իրս, և այն է իմաստութիւն:

Զոր ինչ սիսալիս՝ բժշկեա իսուտովանութեամբ. զիւրաքանչիւրն

յայտնեա ճշմարտութեամբ և մի թագուցաներ: Զերազափորձութիւն բազմօրինակ ճշգրտութեամբ ցոյց. և զիւրաքանչիւր սահմանեալ կարգն՝ կատարեալ ազօթիւք: Եթէ առնջեան ախտացար խորհրդովիք՝ և այնպէս փորձեցար. Եթէ ի հին ծանօթից տեսար, Եթէ ի նորոց՝ յաղգատոհմէ, Եթէ յօտարաց: Արուեկան թէ իդական, անասնական՝ թէ այլ ինչ կերպարան: Տեսութեամբ թէ շօշափմամբ. խառնակութեամբ, շազախմամբ՝ թէ ի խորհուրդան նկարելով: Ի գրաստ արշաւելով, Եթէ ի խառնակս ինչ հայելով: Մերկ զանձն տեսանելով, թէ զօտարու: Ի պարս կանանց, Եթէ ի ժողովս խառնակս: Ի հարսանիս, Եթէ ի տուն սգոյ: Ի լուրս բանից, Եթէ ի ճառս աղտեղիս: Ի հոտս անուշս, Եթէ ի հոտս զաղիրս: Գործոց կատարմամբ, Եթէ անդամոց պատրանօք: Ժամանակաւ հոսմամբ, Եթէ տունջեան գրգռմամբ: Գիջու-

թեամբ, եթէ վիժմամբ : Յղփու-
թեամբ կերակրոյ, եթէ լրութեամբ
ջրոյ: Յաշխատութեանց՝ եթէ ի հի-
ւանդութեանց: Կամաց յօժարու-
թեամբ՝ թէ ակամայ ընդդիմու-
թեամբ: Հաւատացեալս՝ եթէ ան-
հաւատ երեւոյթն եղեւ: Ի՞նքն
յուղեաց զմոլորութեան տեսիլս,
թէ յայլոց կերպարանեալ ըմբըռու-
նեցաւ: Զայս ամենայն և որ սոցին
նման, հարկաւոր է մասնաւորաբար
պատմել հօր խոստովանութեանն: Զի
դիւրին է դիւին զանազան կեր-
պարանել:

Բայց գու զգոյշ լեր, մի յարթ-
նութեան ինչ աղաեղասցիս՝ զի մի
յանուրջս նովիմբ փորձիցիս: Զի
աստ միայն ունիս զառաւելութեան
կարգն, իսկ այլն ամենայն՝ մի օրի-
նակ քեզ եղիցի: Այսկայն վասն ա-
ռաւել զգուշութեան իրին դի-
պուածոյ, աւելի ինչ կրել զկարգն
արժան է, զի մի ի տեսիլս զանա-
զանս ախտասցիս ինչ: Եւ մի միայն

զցանկութեան դիպուածն խոստո-
վանիցիս և զայլոց ախտից անփոյթ
առնիցես. զի մի մամն է յայլոց
մասանց: Այլ խոստովանեա՛, թէ
բանիւք յանցեար, և թէ խորհըր-
դօք: Զկամայ և զակամայ: Զգիտու-
թեան և զանգիտութեան: Զցաս-
ման, զանդէպ երկիւղի, զանբան
արտմութեան: Զծուլութեան, զոր-
կորստութեան, զդատարկութեան,
զանչափութեան քնոյ: Զամբար-
տաւանութիւն, զնախանձ չար, զա-
տելութիւն, զմախանս: Զկեղծաւո-
րութիւն, զցումոգութիւն, զնա-
պարծութիւն, զմնափառութիւն,
զխեղկատակութիւն, զդատարկա-
բանութիւն. միանգամայն զամենայն
ախտա հոգւոյ և մարմնոյ:

Եւ ջանասաջիր զի մի չար ինչ սո-
վորութիւն չարին ի քեզ մնասցէ: Ապա թէ ոչ՝ իբր խմոր զբազում ա-
ռաքինութեանց զզանգուածն իր-
մորէ: Զի թէ ընդ մի կապտնօք ան-
կար ախտի՛ ծառայ եղեր ամենայն

ախտի: Որսկիսի ինչ, զի թէ յաղթեցեր ցանկութեան և յաղթեցար յագահութենէ, յաղթեցար իբր յամենայնէ: Զի ի լուծանել միոյն՝ ոչ կարես ամբողջ և զայլսն պահել, և ժառանգ լինել արքայութեանն: Զի ագահն լուծանէ զսէր, զգլուխ ամենայն օրինաց, և նովաւ զամենայն պատուիրանս: Այդպիսի իմա և զայլն ամենայն: Զի որպէս հարկաւոր է բազում անդամք մարմնոյ, հարկաւոր է և բազում օրէնք հոգոյ: Զի թէ ոչ էին ամենայն հարկաւոր, թերեւս ոչ ամենայն իսկ գրէին: Եւ թէ պատուես զտուիչ օրինացն յոմանս զոր առնես, ապա անպատուես զնա յայնոսիկ զոր ոչ առնես. և յաղագս այնորիկ գաւապարտիս:

Յամենայն, ժամանակի պարտապան տես զքեղ օրինացն Աստուծոյ: Թէ առնիցես՝ Ծառայք անպիտանք եմք յիշեցես, զի թերեւս զղջմամբն ապրեսիս: Զի որպէս

կտարմամբն և խոնարհութեամբն յամբարտաւանութենէ, ապրիցիս, նյոնպէս զղջմամբն զթերին Լցցես: Եւ զԱստուծոյ զպարտապան ըղշնորհն հատուցես:

Զօր մահուն հանապազ ի մտի քո կալցես, զի այնպէս զկարձմատւթենն հատոցես: Ի գիշերի և ի տուել խորհիցիս զի համար տալոց ես ընդ ամենայնի, և այնպէս երկիւղն ի սիրո քո անկցի, և նովաւ յամենայն պատուիրանս Տեառն լիցիս:

Զամենեսեան սիրեսջիր յորոց ոչ մխասեցիս. և յորոց մխասիս՝ խորհիսջիր. սակայն աղօթեա վասն փըրկութեան նոցա:

Ի բանս՝ հակառակակը մի լինիր զքյոն հասատելով: Թէ եւ Ճշմարիս իցես, ի սկզբանն աեզի տուր, և ի գագարել հակառակութեանն ցցց զքո Ճշմարիսն, թէ ընդունին. ապա թէ ոչ՝ մի ինչ տրամիր:

Մի հաւատար վարուց քոց մինչեւ յօր ելի քո յաշխարհէ: Զի

որքան ի նաւարկութեան ես՝ երկիւղ է նաւաբեկութեան։

Մի ուխտեր ինչ Աստուծոյ վաղվագակի անընտրովաբար, զի մի զըդշասցիս և ուխտազանց գտանիցիս։ Ապա թէ ի նեղութեան ուխտեցեր՝ փութա կատարել։

Մի խոստանար տալ ընկերի քո զոր ոչ կարես, այլ տուր զոր կարես։ Եւ մի խոստանար՝ զի մի պատճառ ատելութեան լիցի։

Որ երեց քան զքեղ իցէ նմա տուր զբազմականն, զբան, զխորհուրդ, և զայլն ամենայն. ապա թէ տգէս ոք իցէ՝ ծածկաբար ծանո՛ զարժանն, և զքեղ մի երկեցուցանել ջանասցիս։ Մի խօսիր սուտ ընկերի քո, և մի գաւաճաներ զնա, զի մի և գու անկցիս ի գուբ։

Մի տար տեղի աշխարհականաց գայթակղութեան և ոչ միոյ իրի, ապա թէ ոչ՝ գատապարտիս ի Տեառնէ։ Տուրեւառութիւն վաճառի, շահի վասն՝ ընդ աշխարհականաց

մի առներ, ապա թէ առնիցես՝ տուր առաւել՝ և առ սակաւ։

Մի օթիցես յաշխարհ գիշերի, մանաւանդ միայն. բայց եթէ հարկ իցէ՝ ընդ այլ եղբարս, և կամ առ քահանայի։

Տրանջող մի լիցիս առաւել՝ վասն կերակրոյ, զի մի նմանիցիս որոց յանապատին։ Զխորհուրդ ուրուք քեղ յայտնեալ այլ ումեք մի ասեր, զի մի անհաւատարիմ լիցիս։ Մանրակծիծ մի լիցիս, զի մի զմեծամեծան առցես։ Երդումն, և ոչ սակաւ՝ մի երգնուցուս, զի մի և զմեծամեծան ուսցիս։ Հասուխած՝ մի սովորիցիս, զի մի նմանեսցիս անամոց։ Ընդ ումեք որ մերձ իցես՝ առանձին ինչ մի սաանար, զի մի երկալառակ երեւացիս։

Եբ հաւատարիմ կալցիս առ ամենեսին, ապա թէ պատճառաւ իցէ՝ գիւրաւ լուծանի։ Ընդ ում որ բնակիցիս, որքան երկիցես և օգտիցիս՝ կացցես. ապա թէ արհաւ

մարհել սկսանիցիս՝ մի կացցես։
 Յիւրաքանչիւր աւուր հանդէս առւ-
 նիցես մտաց քոց և ի ժամու, և
 ուզզիցես զսխալեալն բազում փու-
 թով. և այնպէս կարիցես Տեառն
 հաճոյ լինել և ժառանգել զարքա-
 յութիւնն։ Ենորհօք և մարդասի-
 րութեամբ Տեառն մերոյ Յիսուսի
 Քրիստոսի, ընդ որում Հօր միան-
 գամայն և Հոգւոյն սրբոյ վայելէ
 փառք իշխանութիւն և։

ՆՈՐԻՆ ԴԱՐՁԵԱԼ,

ԲԱՆ ԽՐԱՏՈՒ

ՎԱՅՆ ԶԳՈԽՇՈՒԹԵԱՄԲ

ՍՊԱՍՈՒԹԻՐԵԼ,

ՄԱՐՄՆՈՅ ԵՒ ԱՐԵԱՆ ՏԵԱՈՆ

ՄԱՆԿԱՆՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՕՐԻՆԱԴՐԱԿԱՆ ԵՒ ԿԱՆՈՆԱԿԱՆ

ՍԱՀՄԱՆԱՒ ՍԱԿԱԽՈՒԹ

ՆՈՐԻՆ ԴԱՐՁԵԱԼ
ԲԱՆ ԽՐԱՏՈՒ
ՎԱՍՆ ԶԳՈՒՇՈՒԹԵԱՄԲ
ՍՊԱՍԱԽՈՐԵԼ
ՄԱՐՄՆՈՅ ԵՒ ԱՐԵԱՆ ՏԵԱՌ

Գլոհին ամենայն բարեաց Տեառն
առ մեզ եղեալ՝ է հաղորդութիւն
Մարմնոյ և Արեան իւրոյ սրբոյ. և
վասն այնորիկ հարկաւոր է սակաւ
ինչ գրել, թէ որպէս արժան է
սպասաւորել անձառ Խորհրդոյն
պաշտօնէից Եկեղեցւոյ:

Բայց գիտել պարտ է զի զանա-
րաան ոգւով և մարմնով ինդրէ մեծ
Խորհուրդն: Զի թէ ըստ օրինակին
այնպիսի էր, որչափ ըստ Ճշմար-
տութեանն: Քանզի կաղ և կոյր և
ամենայն արատաւոր՝ ի պատարագմն

անընդունելիք էին, և այնոքիկ օրինակ էին ոգւոց անարապութեան: Նաև և ոչ անկատար մարմնով հաշոյ է Աստուծոյ: Զի բատ օրինացն՝ քսան, քսանեւհինդամենից ի վեր և ոչ ի խոնարի հրամայէ կարգել ի քահանայութիւն: Զի թեպէտ անարատ, չար է խակութեամբ թերի դառնել ի պաշտօնն: Զի գերազանցութեամբ բարեաց զարդարիլ ի գեպ է քահանացից՝ և ոչ հասարակութեամբ: Որպէս զի առ այլս նորին բարին իցէ, և ոչ իւր միայնոյ, զի այնորիկ աղադաւ կարգեալ է՝ զի մատակարար ուղղութեան իցէ որոց ընդ ձեռամբ: Ասպա թէ անկատար իցէ ոգւոցն առաքինութեամբ և մարմնոյն հասակաւ՝ բազում է չարեաց տեսակ: Մի, զի ինքեան ի դատապարտութիւն է և աետղաց ի գայթակղութիւն: Եւ գարձեալ զի զեարկութիւնն Աստուծոյ շարժէ յաշխարհ, և խափանումն լինի փըրկական խորհրդոյն: Զի որ ոչ իցէ

ինքեան բարի՝ զիա՞րդ այլոց: Քանզի ի խաւարէ լցու ոչ է, և ոչ ի հիւ անդութենէ առողջութիւն, և ոչ յալքատութենէ փարթամութիւն: Նմանապէս, և ոչ ի չարի՝ բարի: Եթէ զգուզնաքեայ զգործս ան մարթ գոն կատարել՝ յաղագս ան վարժութեան և հասակին թերութեան, զիա՞րդ զմեծագոյնն գործ: Եթէ զհասարակականն խօսս ոչ գիտեն ասել առ ոմանս, ո՞րպէս ընդ Աստուծոյ խօսին: Եթէ հայցել ի մարդկանէ ոչ գիտեն ըստ արժանացն՝ սակաւ ըստ պիտոյիցն՝ որպիսի յեղանակաւ յահաւորէն Աստուծոյ ինդիցեն զոգւոց փրկութիւն: Եթէ ի աեսողաց խոտին՝ յառնել, ի նըստել, ի կալ և ի գնալ, և այն ի համազգեաց, ո՞րչափ և ի հրեղինաց ապասաւորաց աստուածային Խորհրդոյն: Եւ եթէ զմարմնական կերակուրն անկարգաբար ուտեն, բազում անգամ և ծիծաղելի համասեղանից, ըստ որում օրինակի

զհոգեւորականն և զերկնայինն դիւտիցեն ուտել զկերակուր: Եթէ զինքեանց զաջ և զահեակ ընտրել ոչ կարեն, զորոց արդեօք ընտրիցեն զօդուա: Արդարեւ յոյժ զարմանալ ի դէպ է, ոչ ընդ նոսա՝ զի դիւրաստեղծ են ոգւով և ի կամս ուղղը չացն հային, այլ ընդ կարդողս ընդ մեղ, եթէ զիարդ հաւասամբ զանձառ Խորհուրդն ի ձեռս նոցա, և ընդ նոսա՝ և առաջին եւս դատապարտիմք:

Եւ զի մի զայս կրիցեմք, զգուշութեամբ զանձինս և զնոսա զարդարեսցուք, և ամենայն ուղղութեամբ կատարեալ կերպարանեսցուք: Ըստ Տեառն նմանութեան զոր ասէն Առաքեալ. Մատոյց զանձըն անարատ պատարագ, պարտի զանքծութիւն ուղղել նուիրեալն ի քահանայութիւն: Զի սովիմք վկայեցան առաջինքն՝ որք զանձինս Տեառն նուիրեցին, Նոյ և Յոր՝ և այլք նմանք նոցա: Ակսանել յեր-

կիւղէ և ըստ կարգի պատուիրանացն, հանդերձ մաքրութեամբ՝ ժամանել մինչեւ ի գլուխ պատուիրանին՝ ի սէրն: Եւ ամենեքումբք յարդարել և այնպէս համարձակիլ, մանաւանդ սրբութեամբ: Զի նովաւառաւել ընդ Տեառն սրբութեանն յարմարիմք, զի նախ սրբիլ՝ և ապա ի Սուրբն մերձենալ օրէնքն ուսուցանեն: Զի ոչ է միաբանութիւն մաքրութեան եւ անմաքրութեան, որպէս լուսոյ և խաւարի:

Սակայն առաւել սիրոյն կատարելութեամբ ձեւանալի է: Փանզի նովաւ և Տէրն զիւրն կատարեաց Խորհուրդ: Ապա թէ ատելութեամբ և մախանօք ընդ բազում իցէ, որպէս կարիցէ Ճշմարիս Սիրոյն անօթ լինել, և զմարդասիրութիւնն որրա յայլս Ճառագայթել: Զի դէմք հակառակին է ատելութիւնն և նըմանք նորին, որպէս սէր՝ կատարեալ պատկեր և նմանութիւն Տեառն: Եւ զի քահանայութեան Տեառն նշա-

նակ է և մերս քահանայութիւն, ոչ վայելի զՃշմարտութիւն նուազել քան զսուերն, ըստ որում դրեցաւն, Աիրեացես զընկեր քո իբրեւ զանձն քո; իսկ Տէր՝ և զանձն ետ, և հրամայեաց գնել, և աշակերտութեան նշանակ՝ զնոյն եցոյց:

Յայտնի և համառօտ օրինակ սիրոյն՝ է հրամանն Տեառն. Որպէս կամիք թէ արասցեն ձեղ մարդիկ՝ այնպէս արարէք և գուք նոցա, զի այն իսկ են օրէնք և մարդարէք: Յայսմանէ ուսաւ Առաքեալ, ասել, Լուսն օրինացն՝ է սէր: Եւ այլուր, Մեծ քան զսոսա՝ սէր է: Եւ դարձեալ, Զհետ երթայք սիրոյ. և զի, Աէր ընկերի չար ոչ առնէ. Աէր ոչ նախանձի, և այլն: Զայն իսկ եցոյց զԴաւթայն և զՅովսաթանայն, զի տիրապէս սէր՝ ոչ անկանի բնաւ: Վասն այնորիկ իսկ տուաւ, զի զամենեսեան ի մի յարմարեալ կապիցէ, և զարմատ չարեաց հատցէ, և երկայնամիտ ի վերայ նուազելոյն

լիցի, և անոխակալ առ մեղուցեալ սըն: Զի եթէ ի պարզաբար աղօթելն հրամայեաց թողուլ զյանցանը՝ և ապա աղօթել, Թող, ասէ, զյանցանս մեր՝ որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց: Որում ներման արժանասցին որք ոխակալութեամբ յանդգնին յահաւոր Խորհուրդն: Յիշեսցին և զառակ պարտապանացն, որք ոչ ունէին հատուցանել՝ և շնորհեաց: Զի և այնքան եցոյց զդժնդակութիւն չարին մախանաց և ատելութեան, որպէս պէս զի և ի սեղանոյն հրամայեաց երթալ և հաշտիլ:

Արդ սիրեալ հասարակ զամենեսեան՝ որքան հնար է, և ի վխասողաց հրաժարեալ վասն զգուշութեան՝ բայց մի ատեր: Եւ զարժանաւորսն պասուեա առաւել: Այսոքիւք բարեշուք լիցիս, ըստ որում գրեալն է՝ Քահանայք քո զդեցցին զարդարութիւն: Ի վերայ այսորիեկ ուսումնասեր լինել՝ որով արիութիւնն

յարդարի, և բարեկարգ լիցիս: Զի իբր արուեստականի գործիք են պէսպէս ուսմունք, որովք մարթէ լինել արուեստին, որպէս զի որք ոչ ունին՝ ոչ կարեն գործել: Անխափան կատարեա զարաշտոնն առւնչեան եւ գիշերւոյ: Եւ յորժամ հանդերձեսցիս մատչել ի սեղանն սրբութեամբ և կատարել զտէրունական Խորհուրդն, մի ի պատճառս ագահութեան առնիցիս զձրի փըրկութիւնն աշխարհի: Զի և մէք ի Տեառնէ ոչ փոխարէն առաք, այլ պարգեւս: Եթէ ամենահաջոյ առնիցիս Տեառն, զպէսս քո յայնմանէ առնուցուս, Զի պաշտօնեայք սեղանոյն՝ ի սեղանոյ անտի վայելն: Իսկ զառաւելեալն՝ յաղքատածիցես:

Եւ մի առնիցիս փառասիրութեամբ, արհամարհէլով զփառս Աստուծոյ: Եւ մի մարդահաջութեամբ, զի Տէր ցրուէ զոսկերս մարդահա-

չոյից: Եւ մի յաւուրս տօնից սեթեւեթեալ արիասցիս, և յայլ աւուրս հեղդացեալ՝ անփոյթ առնիցես: Եւ մի յաւուրս ագապից յափշտակիցես զառաջին պատիւն՝ շահի վասն և մեծարանաց միանդամյն, զի մի իբր ամենայնիւ ախտաւոր լիցիս: Այլ յամենայն ժամանակի՝ մի գիտաւորութիւն քեզ լիցի, կամացն Աստուծոյ հաճոյութիւնն: Եւ զանձն քո զարդարիցես ըստ նմանութեան պատմուճանին Ահարոնի՝ արդարութեամբ: Եւ անխոցոտելի լիցիս յամենայն ախտէ, մանաւանդ ի գիւէն պոռնկութեան: Եւ Եթէ կրիցես ինչ ի ցանկութենէ յարթնութեան և թէ ի քուն, սըրբիցիս նախ՝ և ապա ի սրբութեանն մատիցես: Զնոյն և յայլ ախտից սրբիցիս և ապա համարձակիցիս: Զի անտեղի է ի մի յախտից զգուշանալ՝ և յայլն ոչ: Որպէս զբազումս տեսանեմք, զի զնախանձ և զմախանձ՝ զմայրն մահու, և զա-

տելութիւն և զայլ ամենայն ախտա, զհոգուոյ և զմարմնոյ՝ անխարաբար ունին, ի մի միայնէն պիտակաբար զդուշացեալք յերազափորձութիւնըս, որովք մանաւանդ դատապարտին քան թէ պատուին:

Բայց օրինակ մաքրութեանն կարգոք յերազափորձութիւնն՝ այս պիսի է, ըստ որում գրեցաւս. քանզի բազմօրինակ է; Զի է ըստ բնութեան կրից, և է ըստ կամաց մերոց յորդորման, և է ըստ դիւց պատրանաց: Եւ այսոքի դարձեալ զանազան. ուստի որոշին ի միմեանց կարգօք:

Եւ ըստ բնութեան կրիցէ՝ յորժամ առաւելեալն արտաքս հոսի: Եւ դարձեալ ի ձգնութենէ և յաշխատութենէ և ի հիւանդութենէ պատահէ: Եթէ յառաջ քան զդեշերապաշտոնն լինի՝ զօրն արտաքց կացցէ, և վաղիւն պատարագեցէ: Հոսմանն երկրորդ կարգ՝ գիծութեանն. մի, յիսուն ծնրով: իսկ

թէ յառաւօտու պատահի, մի ի վաղիւն՝ այլ ի միւս վաղիւն հաղորդեսցի. բայց թէ հարկ իցի՞ հաղորդեսցի վաղիւն: իսկ եթէ տեսութեամբ իցէ օտարաց, յօրն արտաքոյ կացցէ և վաղիւն ի ներս, և ի միւս վաղիւն հաղորդեսցի. ապա թէ հարկ իցէ հաղորդեսցի վաղիւն: իսկ եթէ յառաւօտու իցէ երրորդ կարգ տեսութիւնն, երրորդ օրն հաղորդեսցի:

Ա. Ա. թէ բուն մերձաւորօք փորձեսցի ի սատանայէ, և չէ յառաջ ախտացեալ՝ յերրորդ աւուրին պատարագեցէ, ապա թէ չափաւոր ախտացեալ իցէ՝ հինգերորդ կանոնն: իսկ եթէ առաւել ախտացեալ իցէ առւընջեան մանաւանդ ժամանակօք, և այնպէս փորձի, զշնութեան սահման ունի: Թէ մի անգամ հանդիսի, երկու շաբաթ կրկն կարգօք ապաշխարիցէ և ապա հաղորդիցի: Եթէ կրկնի եւս՝ կրկնապատիկ ապաշխարիցէ: Ապա

թէ ախտացեալ սովորութիւն կալ-
ցէ՝ ի բաց կացցէ ամենեւիմբ ի հա-
ղորդելոյ, մինչեւ ճշմարտապէս
սրբեսցի, և ապա ի վարդապէտաց
ուղղեսցի:

Այդպէս եղիցի և օտար ծանօ-
թից, եթէ հին. և եթէ այլ ընտան-
եացն՝ կարգօք առաւել լիցի: ի
գիշերի, և ի տունջեան և յառա-
ւօտու՝ կարգօք զանազանին: Ապա
թէ ի վերայ գրաստու տեսանէ կամ
զիսառնակս անասնոց՝ երեք կարգ.
օրն արտաքոյ, վաղիւն ի ներքս,
յերրորդին հաղորդեսցի:

Ապա թէ յետ պատարագին ի
տուընջեան, ոչ հեղգացեալ՝ փորձի
օտար տեսութեամբ, կրկին կարգ.
վեց օր արտաքոյ, մի՛ ի ներքս, և
յութերրորդն հաղորդեսցի:

Իսկ յանտես հոսումն և ի գի-
ջութիւնն և յառաջագոյն ախտա-
նալն, եթէ յօտարս և եթէ ի ծանօ-
թըս թէ յընտանիս, յառաւելն և ի
նուազն և ի հեղգալն՝ զանազանին

կարգն, որպէս յառաջ գրեցան, զի
ի վարդապէտաց ուղղին: Նոյնպէս
և յայլ դիմուածմն փորձանաց:

Իսկ եթէ ի յոլով կերակրոց և
յըմպէլեաց լիցի, չորս կանոն. երեք
օր արտաքոյ և մի ի ներքս, և ի
հինգերրորդն հաղորդեսցի:

Ապա թէ արուական ինչ իցէ
փորձանքն, և կամ անասնական, և
կամ այլ ինչ այդպիսի՝ և կամ այլ
աղդի. թէ չունէր ինչ յառաջագոյն
խոցուած տեսութեան և կամ խոր-
հըրդոց, օրն արտաքոյ՝ և վաղիւն
ի ներքս, յերրորդն հաղորդեսցի:
Ապա թէ ախտացեալ, նոյն սահ-
ման կացցէ՝ որպէս վասն այլ տե-
սութեան գրեցաւ: Յառաջ քան
զգիշերին պաշտօնն, և յառաւօ-
տուն և ի տունջեանն, պատարա-
գեալ և անպատարագ, զանազանին
կարգն:

Իսկ պատրաստել զնիւթ Մար-
մայ և Արեան Տեառն՝ այսպիսի
է: ի յընտիր և յաղնիւ ցորենոյ

պարտ է զհացն սրբութեան կազմել, և ոչ վայրաբար յամենայնէ: Եւ ի նշխարատան պահել սպասաւորաց եկեղեցւոյն: Բեկեալ և այրեալ և յերկիր անկեալ նշխարով չէ պատարագ մատուցանել: Դոյնափէս զբաժակ պատարագին՝ քահանայք առանձին ամանով պահեցեն, և սպասաւորք եկեղեցւոյն հոգասցեն, զի մի պատճառ վասու ինչ լիցի:

Ապա թէ ոք մինանկ գինով և կամ նշխարով յանդէտս պատարագ մատուցանէ, ամենայն ամանքն սրբութեան՝ յորս հասաւ պղծութիւնն, հանդերձ սկէծած կոցովն, բայց ի հանդերձից սեղանոցն՝ ի բաց խուտեսցին: Եւ քահանայքն երեք շաբաթս պահօք ապաշխարիցեն. երկու արտաքոյ՝ և մի ի ներքս, և ապա հաղորդեացին սրբութեանն:

Իսկ թէ գիտութեամբ ոք մատուցանէ, առ ուն հարկանել զանձառ խորհուրդն՝ ի կարգէն լուծցի: Բայց

վարդապետք իշխանք են, որպէս կամին՝ արասցեն ըստ ապաշխարութեան նոցա. Երեք ամ սրբապահութեամբ ի ներքս՝ և ապա հազորդեացին, այսպէս և կամ այնպէս՝ ի գիտութիւն վարդապետին թողեալ է: Իսկ ի դնել սպասուցն՝ մերձեցեալ մուկն արածիցէ ի նշխարն, և գիտացեալ քահանայն յսկզբանն մինչեւ յայն տեղին որ առնու ըզհացն և զբաժակն և օրհնէ, փոխիցէ զնշխարն՝ և այլ դնիցէ, և յառաջն սկսեալ՝ կատարիցէ զպատարագն: Իսկ թէ յետ օրհնելոցն մինչ ի բաշխելն գիտացէ, խափանեսցէ զպատարագն: Թէ այլ ոք լիցի ձաշակեսցէ զանկատար Խորհուրդն, և երեք շաբաթ արտաքոյ կացցէ. ապա թէ ինքն իցէ՝ կերիցէ և մի թողցէ. քառասուն և ութ օր արտաքոյ կացցէ սրբութեանն:

Իսկ թէ ի մկրտելն և ի մասնաւորելն գիտացէ՝ կատարեսցէ ըզխորհուրդ, և երեք շաբաթ արտա-

կացցէ սրբութեանն՝ և ապա
հաղորդեսցի, և ամանքն մի խոտես-
ցին։ Իսկ թէ գիտութեամբ ծու-
լացեալ և արհամարհանօք անհոգա-
նայ, և մատուցանէ զպատարագն՝
ջերմեռանդն և սրբապահ ապաշխա-
րութեամբ, մի ամ արտաքոյ կացցէ՝
և ապա հաղորդեսցի։

Իսկ թէ քացախ գինով առնիցէ
յանդէտս, կրկին ապաշխարու-
թեամբ, երեք չաբաթ արտաքրոյ
կացցէ՝ և ապա հաղորդեսցի։

Ապա թէ գիտութեամբ՝ ամ մի։
Ա. Յ. թէ ջրով մատուցանէ յան-
դէտս, և մինչեւ ցբաշխումն, ուր
և գիտացեալ, ի բաց թողցէ, և այլ
մի մատուցէ։ Ապա թէ ի բաշխելն
գիտացէ, կատարեսցէ զպատարա-
գըն՝ և ինքն ամ մի արտաքոյ կացցէ
սրբութեանն, անխափան՝ նովին
կարգով։ Ապա թէ գիտութեամբ
մատուցանէ՝ ի կարգէն լուծցի, և
ապաշխարիցէ այն կարգաւն՝ որպէս
կանոնք հրամայեն։

Ապա թէ երկօրեայ նշխար ոք
մատուցանիցէ յանդէտս, երեք շա-
բաթ արտաքոյ կացցէ նովին կար-
գաւն։ Ապա թէ գիտութեամբ ոք
մատուցանէ, ծուլացեալ կամ գի-
տացեալ և ագահեալ, երեք քա-
ռասունս արտաքոյ կացցէ հաղոր-
դութեանն, զերիս մասն արտաքոյ
սրբութեանն, և զմի ամ ի ներքս.
և ի կատարել թուոյն և քսանիցն՝
մտեալ հաղորդեսցի։ Իսկ թէ օթի
ջրով ի պատճառս ծուլութեան
կազմեաց զնշխարն, ութ օր արտա-
քոյ կացցէ հաղորդութեանն։ Ապա
թէ հարկաւ պահի հեռագոյն գոլով,
որպէս ի ձմեռնային ժամանակի, և
կամ յերկիւղէ աւագակաց՝ մի խա-
փանեսցին զպատարագն։ Նոյնպէս
թէ ձեամբ պատահեսցի՝ առցեն ի
սուրբ տեղեաց, անսխալ է՝ թէ Ա. Յ.
տուած կամի։ Ա. Յ. թէ մասն ան-
կանի ի սուրբ սեղանն, երեք կար-
գով ապաշխարեսցեն. մի օր արտա-
քոյ կալով, և երկու օր ի ներքս՝

Խորհրդոյն հաղորդեսցին։ Իսկ եթէ
յիսկէծածկոցն անդանիցի՝ մի խը-
տրիցի՝ անվաս է։

Իսկ եթէ ի խօնարհ՝ առ ուն սե-
զանոյն անկանիցի, ութ օր արտա-
քոյ կացցէ սրբութեանն, և երկու
ի ներքս, և ապա հաղորդեսցի։ Իսկ
թէ ներքոյ բեմին անկանիցի՝ երկու
ութեակս պահիցէ։

Ապա թէ ի գինոյն հեղու ի սե-
զանն՝ ութ օր. իսկ թէ ի խօնարհ՝
քառասուն օր։ Զերիս տասն ար-
տաքոյ, զմի ի ներքս, և ապա հա-
ղորդեսցին։ Իսկ թէ ի ներքոյ բեմին
հեղցի՝ քառասուն ապաշխարիցէ։

Ա.ՅԼ թէ իշացաւ յեկեղեցի, եթէ
ակամայ՝ ութ օր արտաքոյ կացցէ,
ապա թէ կամաւ անհոգացեալ՝ ամ-
մի։ Բայց վարդապետն իշխան է՝
ըստ ապաշխարութեանն և զժամա-
նակն կարձել։ Այնպէս և ի պա-
տրագին, թէ ակամայ՝ երկու ու-
թեակս արտաքոյ կացցէ, ապա թէ
կամաւ՝ այլազգաբար անյուսու-

թեամբ յարհամարհանս եկեալ սըր-
բոյ Խորհրդոյն՝ ի բաց կացցէ ա-
մենեւին ի քահանայութենէն զոր
ունին։ Բայց ի ջերմեռանդ յապաշ-
խարութեան յարտասուս նորա հա-
յեցեալ վարդապետն՝ իշխան է որ-
պէս և կամի։ Ա.ՅԼ թէ զկարդ գոլով
պատարագեալ յանդէտս՝ շաբաթ
մի արտաքոյ կացցէ. ապա թէ գի-
տացեալ և պատարագեսցէ յաղագս
պատուորաց եկելոց՝ փառասիրէ, և
կամ յաղագս ընծայից բերողաց
հարկեցաւ վառաւորել, զփառն
որ առ յԱստուծոյ անարգեաց,
այնպիսին ընծայիւք է։ Եթէ սու-
վորութեամբ առնիցէ, ամենեւին ի
բաց կացցէ ի կեանս իւր ի սուրբ
Խորհրդոյն. ապա թէ մի անդամ
կամ երկիցս ըստ հարկի արար, և
յետոյ զզջացեալ, քառասուն օր
արտաքոյ կացցէ սրբութեանն՝ ջեր-
մեռանդն ապաշխարութեամբ, եւ
ապա հաղորդեսցի։ Եւ ապաշխա-
րութեանն արտաքոյ եկեղեցւոյ որ

լինի, ըստ հարկի մեծի որ կացցէ
 ի վերայ, իշխան են գիտունք՝ որ-
 պէս յաւելուկ՝ սոյնպէս և կարձել.
 այսինքն, ի հնդէ՛մի, ի տասնէ՛ եր-
 կուս, ի քսանէ՛ չորս, յերեսնէ՛
 վեց, ի քառասունէ՛ ութ, ի յիսնէ՛
 տասն, ի հարիւրէ՛ քսան։ Եւ այս-
 պիսի ընտրովութիւն ի հարկաւոր
 ժամանակի, զջեռմեռանդ կարգա-
 ծութիւն զքահանային տեսեալ, թէ
 այնպիսի հանդիպի մատուցանել
 պատարագ՝ բարւոք է թողացուցա-
 նել ի կամս Աստուծոյ։

30-08

22.08.88

21002/88

АУКЦИОН



Ազգային
ԳՐԱԴԱՐԱՆ

«Ազգային գրադարան



NL0352481

891.99

U-79

44290

891.99

21-79